ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

ձեռնարկ դասավանդողների համար

Մեդիագրագիտությունը հակամարտությունների ժամանակ

Ձեռնարկ դասավանդողների համար

Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, 2023

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը ներկայացնում է «Մեդիագրագիտությունը հակամարտությունների ժամանակ» ձեռնարկը՝ նախատեսված դասավանդողների համար, որոնք ֆորմալ կամ ոչ ֆորմալ կրթական միջավայրում փորձում են սովորողներին բացատրել հակամարտության ու մեդիայի փոխազդեցությունը, օգնել նրանց ավելի լավ կողմնորոշվել տեղեկատվական հոսքերում՝ ճգնաժամերի ու պատերազմի ժամանակ։

Այս ձեռնարկի կիրառությունը առավել արդյունավետ է ՄՆԿ-ի՝ «Մեդիագրագիտություն», «Մեդիա iգիտություն» ուսումնական ձեռնարկների հետ համադրությամբ։

Հեղինակներ

Արմեն Սարգսյան

Արթուր Պապյան

Լուսինե Գրիգորյան

Հայկ Սմբատյան

Հարություն Մանսուրյան

Վահրամ Մարտիրոսյան

Խմբագրական կազմ

Լիլիկ Ստեփանյան

Լուսինե Գրիգորյան

Նախագծի ղեկավար

Նունե Սարգսյան

Ձևավորումը՝ Կոյա Գևորգյանի

Նախագիծը պատրաստել է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը՝ EU4peace ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից։ Նախագծում տեղ գտած կարծիքները պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրամիության տեսակետն ու քաղաքականությունը։

EUROPEAN UNION
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՄԵԴԻԱ
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

Երբ անջատվել են լույսերը. պատերազմի լուսաբանման բացերն ու բայցերը 6

Թշնամու կերպարը 13

Պատերազմի առաջին զոհը. ապատեղեկատվությունն ու
հակամարտությունները 20

Արյուն, ավեր, արցունքներ. մեդիայի խթանիչներն ու ցավազրկողները 29

Խաղաղության խոսույթը Արցախյան առաջին և երկրորդ պատերազմների
մեդիայում 38

Պատերազմի թվային վտանգները 43

Գաղափարներ գործնական աշխատանքի համար 47

Օգտակար հղումներ 60

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Մեդիագրագիտությունը հակամարտությունների ժամանակ» ձեռնարկը նախատեսված է դասավանդողների համար, որոնք ֆորմալ կամ ոչ ֆորմալ կրթական միջավայրում փորձում են սովորողներին ցույց տալ հակամարտության ու մեդիայի փոխազդեցությունը, օգնել նրանց ավելի լավ կողմնորոշվել տեղեկատվական հոսքերի մեջ՝ ճգնաժամերի ու պատերազմի ժամանակ։

Այսօր աշխարհում գրեթե բոլոր կարևոր իրադարձությունները, այդ թվում՝ հակամարտությունները, բախումները, ցույցերը, պատերազմները, մեդիականացված են. վավերագրվում, հեռարձակվում, մեկնաբանվում ու տարածվում են թվային միջավայրում։ Սոցցանցերի լրահոսը թերթելիս մեր ընկերների ընտանեկան լուսանկարների, օրվա լուրերի ու զվարճալի հոլովակների արանքում կարդում ենք զոհերի ու սպանությունների մասին, տեսնում ենք պայթյունի, ջրհեղեղի ու երկրաշարժի կադրեր, մահվան տեսարաններ… Մեդիան աշխարհի ցանկացած ծայրում տեղի ունեցող ողբերգությունը դարձնում է ավելի մոտ, բայց նաև՝ ավելի սովորական։ Ավելին, հաճախ հենց սոցիալական մեդիայի ալգորիթմն է որոշում, թե որ հակամարտության մասին ու որ կողմի տարածած լուրը հասնի մեզ։

Պատերազմի ժամանակ տեղեկատվական հոսքերը շատ ավելի հակասական ու զգացմունքային են դառնում։ Իսկ երբ պատերազմը մեր կողքին է, երբ մենք ինքներս ենք հակամարտության մեջ ներքաշված, զգացմունքներն ավելի են սրվում։

2020թ. Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում ու, առավել ևս, դրանից հետո Հայաստանում էլ սրվեցին հանրային տրամադրություններն ու մարդկանց զգացմունքները, իսկ տեղեկատվության հանդեպ վստահության ճգնաժամն ավելի խորացավ ։ #հաղթելուենք հեշթեգը, որ պատերազմի կարգախոսն էր, դարձավ քարոզչության ու ապատեղեկատվության խորհրդանիշ։ Շատ համոզմունքներ, որ ձևավորվել էին հանրության մեջ երկար տարիների ընթացքում, հարցականի տակ դրվեցին։ Մեդիան, որ պատերազմի օրերին միայն պաշտոնական լրահոս էր տարածում՝ ռազմական դրությամբ սահմանափակված, կորցրեց վստահությունը։

Մեդիագրագիտությունն առաջարկում է այն գործիքակազմը, որն օգնում է ճգնաժամային իրավիճակներում ավելի լավ հասկանալ տեղեկատվական դաշտը, մեդիայի դերն ու ազդեցությունը, լինել ավելի պատրաստված։ Մեդիագրագիտության հիմքում ցանկացած տեղեկատվության քննադատորեն վերաբերվելու մոտեցումն է, վերլուծելու, ստուգելու, համեմատելու հմտությունը, բայց նաև՝ սեփական թվային անվտանգությանն ու հոգեբանական առողջությանը հետևելու կարողությունը։ Մեդիագրագիտությունը նաև օգնում է գնահատել որակյալ լրագրությունն ու ձևավորել վստահություն այն մեդիայի նկատմամբ, որն ազնիվ է իր լսարանի հետ, պատասխանատու և հետևողական։

«Մեդիագրագիտությունը հակամարտությունների ժամանակ» ձեռնարկն առաջարկում է կիրառել մեդիագրագիտության մոտեցումները հակամարտություններն ու դրանց լուսաբանումը հասկանալու համար։ Ձեռնարկը կազմված է երկու հիմնական մասից։

Առաջին մասում տեղ են գտել հինգ վերլուծական նյութեր, որոնք կօգնեն ավելի լավ հասկանալ հակամարտությունների ժամանակ մեդիայի դերը, քարոզչական ու մանիպուլյատիվ հնարքները, տարբերել ապատեղեկատվությունը, սովորել թվային անվտանգության պաշտպանության հիմնական քայլերը։ Նյութերի հեղինակները քննարկում են միջազգային ու հայաստանյան օրինակներ, վերլուծում հակամարտությունների համատեքստում մեդիայի ու լրագրողների աշխատանքը և առաջարկում հուշումներ ու լուծումներ։

Երկրորդ մասում հավաքված են ուսումնական առաջադրանքների գաղափարներ, որոնք կարելի է կիրառել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական միջավայրում։ Դրանք հիմնված են այս ձեռնարկի տեսական նյութերի, ինչպես նաև ՄՆԿ-ի այլ նախագծերի՝ ձեռնարկների, ֆիլմերի, վերլուծությունների ու փորձի վրա, ներկայացնում են օրինակներ տեղական ու միջազգային մեդիայից։ Դասավանդողը կարող է փոփոխել առաջարկվող առաջադրանքները, ինչպես նաև մշակել սեփական վարժությունները՝ օգտվելով ձեռնարկի «Օգտակար հղումներ» բաժնի նյութերից։

Ձեռնարկում առաջարկվող թեմաները կապվում են թե՛ մեդիագրագիտության, թե՛ հասարակագիտության, պատմության, կոնֆլիկտաբանության ուսումնասիրությունների ու խնդիրների հետ։

Մենք առաջարկում ենք այս ձեռնարկին զուգահեռ ուսումնասիրել և կիրառել նաև ՄՆԿ-ի «Մեդիագրագիտություն» և «Մեդիա ւգիտություն» ուսումնական ձեռնարկները, որոնք երաշխավորված են ԿԳՄՍ նախարարության կողմից և կօգնեն ավելի խորությամբ հասկանալ մեդիագրագիտության սկզբունքները։



Երբ անջատվել են լույսերը. պատերազմի լուսաբանման բացերն ու բայցերը

Հայկ Սմբատյան
սոցիոլոգ-կոնֆլիկտաբան

Ակնհայտ է, որ «լուսաբանել» բառի հիմնական արմատը լույսն է, և խոսքը լույս սփռելու, պարզաբանելու, լուսավորելու մասին է: Եթե պատկերացնենք, որ հասարակությունը բազմաբնակարան շենք է, որտեղ էլեկտրականությունն անջատել են, լրագրողի գործը նման է այդ շենքի բնակարանները լապտերով ուսումնասիրող տեսուչի գործին:

Ձեռքում լապտեր ունենալն այդքան էլ ճակատագրական չէ, եթե բնակարանների լուսավորությունը բավարարում է սենյակները և դրանց պարունակությունը տեսնելու համար: Տան բնակիչներն էլ կարող են օգնել տեսուչին կողմնորոշվել տարածքում, հատկապես, եթե նա նախկինում բազմիցս եղել է այդ շենքում, միշտ արժանացել է ջերմ ու դռնբաց ընդունելության: Լրագրողի գործն այդպիսի «շենքերում» այնքան էլ բարդ չէ:

Պատերազմն այսպիսի շենք չէ:

Բոլորովին:

Ընդհակառակը:

Պատերազմը նման է մի մեծ ու մութ տան, որը չունի պատուհաններ, հետևաբար՝ բնական լույսի ճառագայթներն այնտեղ չեն թափանցում, քիչ մարդկանց է հայտնի, թե այդ տանը քանի սենյակ կա, ովքեր են իսկական տանտերերը, իսկ, այ, տեսուչներն այդ տան ամենաանցանկալի հյուրերն են:

Ամեն անգամ լրատվամիջոցներում պատերազմի մասին որևէ բան կարդալիս, լսելիս, դիտելիս, պիտի հիշենք, որ լրագրողը լապտերով մտել է այդ մեծ ու մութ տունը և հաջողել է ինչ-որ բան տեսնել ու պատմել: Սա, իհարկե, բավարար չէ ամբողջ տան մասին պատկերացում կազմելու համար, այստեղ կան նաև շատ բայց-եր: Պատերազմի լուսաբանմանը հետևելիս այս բայց-երը մտքում ունենալը կարող է նշանակալիորեն նվազեցնել հավանականությունը, որ մեզ կապակողմնորոշեն՝ մտադրված, թե՝ ոչ:

Բայց 1. Որոշ սենյակների դռները փակ են մեզ համար

Լրագրողը, որքան էլ շատ ցանկանա ամեն բան ճշտել ու հաղորդել լսարանին, լապտերով կարող է մտնել միայն այն սենյակները, որտեղ մուտքն արգելված չէ: Պատերազմն, ըստ էության, անվտանգության ճգնաժամ է, և բնական է, որ հետաքրքրասեր հյուրերը, տեսուչներն ու լսուչներն անցանկալի են որոշ սենյակներում:

Այդպիսի սենյակներն ավելի շատ են, քան կարելի է պատկերացնել: Հետևաբար՝

պետք է հիշել, որ այն, ինչ մեզ հաջողվում է իմանալ պատերազմի մասին, սովորաբար թույլատրելիի սահմաններում է։ Իհարկե, երբեմն լրագրողին հաջողվում է ներսի սենյակներից որոշ բաներ դուրս բերել, երբեմն էլ ներսի սենյակներին շարունակական հասանելիություն ունեցող լրագրողներին արժե զգուշությամբ, նույնիսկ կասկածով վերաբերվել ու մտածել՝ «բայց մի որպե...»։

Նկարը՝ WarGonzo նախագծի

44-օրյա պատերազմը ակտիվորեն լուսաբանում էր ռուսական WarGonzo նախագիծը, որի հիմնադիրը՝ ռազմական թղթակից Սեմյոն Պեգովը, պատերազմի կիզակետերից տեղեկատվություն էր տարածում և հաճախ հայտնվում էր այնտեղ, ուր հայաստանցի լրագրողները մուտք չունեին։ Կարճ ժամանակում WarGonzo-ի յուտյուբյան և տելեգրամյան ալիքները մեր հանրության հիմնական տեղեկատվության աղբյուրներից դարձան, շահեցին մարդկանց վստահությունը՝ իբրև ճշմարախոս և հայամետ ալիքներ։ Քչերն էին հարցեր տալիս այն մասին, թե ինչպես ու ինչու է Պեգովը հասանելիություն ստանում պատերազմի թեժ կետերին և բացառիկ տեղեկություններին։ Պատերազմին հաջորդող շրջանում փաստեր ստուգող լրագրողները բացահայտեցին WarGonzo-ի տարածած մի շարք ապատեղեկատվություններ՝ Արցախում ռուսերենին պետական կարգավիճակ տալու օրակարգի[1], ինչպես նաև ռուս-ուկրաինական կոնֆլիկտի որոշ իրադրությունների վերաբերյալ[2]։ 2022-ի հունիսին Յություբը հեռացրեց WarGonzo-ի ալիքը իր հարթակից[3] համարելով, որ այն ռուսական քարոզչություն և կեղծիք է տարածում Ուկրաինայի պատերազմի վերաբերյալ։

1 Ռուսերենին Արցախում պետական կարգավիճակ տալու օրակարգ ԱՀ ԱԺ-ում չկա, fip.am, December 2, 2020, https://fip.am/14057.

2 Միլերովոյի ռազմական օդակայանում այրված ՍՈՒ-30-ի մասին տեղեկությունը ճիշտ է. WarGonzo-ն կրկին կեղծիք է տարածում, fip.am, February 25, 2022, https://fip.am/18381;
WarGonzo-ն կեղծում է. Խարկովից «այսօրվա» նկարը 2014 թվականի է, fip.am, February 24, 2022, https://fip.am/18317.

3 YouTube-ը հեռացրել է Պեգովի WarGonzo ալիքը, accessed October 22, 2022, https://www.tert.am/am/news/2022/06/21/WarGonzo/3814298.

Հայտնի համեմատություն է. պատերազմը, սառցալեռան պես, որքան ջրի մակերևույթին է, բազմապատիկ ավելի շատ՝ դրանից ներքև։ Մութ տան որոշ սենյակների դռները փակ են մեզ համար, և լինում է՝ որ այդպես էլ չեն բացվում։

Բայց 2. Լապտերի գույնը եղանակ է փոխում

Մեդիան սիրում է գույներ ու ֆիլտրեր, դրանք գրավիչ են դարձնում պատկերն ու պատմությունը։ Լսարանն էլ է սիրում գույներ։ Եթե մեդիան ընտրում է այն գույները, որոնք լսարանն է հավանում, արդյունքում կարող է ստացվել, որ բոլորս լսում ու կարդում ենք այն, ինչ ուզում ենք լսել ու կարդալ։ Ավելին, այն նյութերը, որոնք այլ գույն կամ տեսանկյուն են առաջարկում, հեշտությամբ անկյուն են նետվում և դուրս մղվում հանրային քննարկումներից։

Լապտերի գույնը հաճախ որոշվում է լրատվամիջոցի որդեգրած սկզբունքներով ու աշխարհայացքով, այն ակնոցով, որով մեդիան տեսնում և ներկայացնում է իրականությունը։ Դա կարող է պայմանավորված լինել գաղափարախոսությամբ ու արժեքներով կամ աշխարհաքաղաքական, տնտեսական և այլ շահերով։ Միևնույն պատերազմական իրավիճակի կամ դեպքի մասին տարբեր լրատվամիջոցներ կարող են տարբեր կարծիք ու պատկերացում ձևավորել, նույնիսկ՝ միայն վերնագրի ընտրությամբ։

2021թ. փետրվարի 16-ին մի շարք լրատվամիջոցներ հրապարակեցին Իսրայելի կողմից կորոնավիրուսի պատվաստանյութի՝ դեպի Գազայի տարածք արգելքի մասին։ Օրինակ՝ թուրքական Anadolu գործակալությունը գրեց՝ «Պաղեստինը դատապարտում է Իսրայելի կողմից պատվաստանյութի արգելափակումը դեպի Գազա»[4], Քաթարում գործող Al Jazeera-ն՝ «Իսրայելն արգելափակել է ռուսական Sputnik V պատվաստանյութի առաքումը Գազա»[5]։ Նույն իրավիճակը բրիտանական The Guardian-ը վերնագրեց «Իսրայելը արգելափակել է Քովիդի դեմ պատվաստանյութերի մուտքը Գազա, ասում են պաղեստինցիները»[6], ամերիկյան AP գործակալությունը՝ «Պաղեստինցիներն ասում են, որ Իսրայելն արգելափակում է պատվաստանյութերի առաքումը Գազա»[7]։ Եթե ուշադրություն դարձնենք, թե նույն իրադարձությունը ինչպես են վերնագրում արևմտյան և ոչ արևմտյան մեդիաները, առաջին երկու վերնագրերում կարող ենք նկատել որոշակի մեղադրանք Իսրայելի դեմ, մինչդեռ վերջին երկուսում կզգանք որոշակի կասկած պաղեստինացիների պնդումների վերաբերյալ։

Լույսն ու գույնը կարող են պայմանավորված լինել նաև լրագրողի անձնական պատկերացումներով, զգացմունքներով, աշխարհայացքով։ Իհարկե, որակյալ լրագրողը պիտի փորձեր լինել անկողմնակալ և չեզոք, սակայն կարևոր է հիշել նաև մարդկային գործոնի մասին։

---

4 Palestine Condemns Israel's Blocking of Vaccine to Gaza, accessed October 23, 2022, https://www.aa.com.tr/en/health/palestine-condemns-israel-s-blocking-of-vaccine-to-gaza/2146970.

5 Israel Blocks Shipment of Russian Sputnik V Vaccine to Gaza, accessed October 23, 2022, https://www.aljazeera.com/news/2021/2/16/palestinians-say-israel-blocking-shipment-of-vaccines-to-gaza.

6 Oliver Holmes, Israel Blocked Covid Vaccines from Entering Gaza, Say Palestinians, The Guardian, February 16, 2021, sec. World news, https://www.theguardian.com/world/2021/feb/16/israel-blocked-covid-vaccines-from-entering-gaza-say-palestinians.

7 Palestinians Say Israel Blocks Shipment of Vaccines to Gaza, AP NEWS, accessed October 23, 2022, https://apnews.com/article/israel-middle-east-coronavirus-pandemic-west-bank-gaza-strip-375df3e337f7f62aca7dca832e28dc84.

Բայց 3. Մեզ հասած տեղեկությունը ընդամենը մեզ հասած տեղեկությունն է

Հասկանալու համար, թե ինչպիսին է հեղինակի ու լրագրողական խմբի դերը ցանկացած տեղեկություն տարածելու գործում, կարևոր է պատկերացնել, թե, մինչև լսարանին հասնելը, մեդիա նյութն ինչպես է մշակվում: Տեղեկությունը ֆիլտրվում է նախ լապտերի գույնով, հետո՝ դրա լուսարձակման ուժգնությամբ. որքա՞ն լավ է լրագրողը զննել իրավիճակը, արդյո՞ք ավելի մոտիկից, հեռվից կամ պարզապես այլ տեսանկյունից դիտելիս նույն իրավիճակը ավելի լավ չէր ուսումնասիրի ու փոխանցի լսարանին: Իհարկե, սա միշտ կախված է նաև նրանից, թե ինչ կարծրատիպեր, պատկերացումներ, վախեր կամ հղձեր ունի լրագրողը, նրանից, թե որքան փորձառու է լրագրողը մութ օբյեկտները լապտերով ուսումնասիրելու հարցում: Բայց նույնիսկ ամենափորձառու լրագրողի լապտերը կարող է անսարքություններ ունենալ և ապակողմնորոշել:

Պետք է նաև հիշել, որ հաճախ լրագրողը մեզ ցույց է տալիս օպերատորի տեսածն ու ֆիքսածը, որն անցնում է ձևակերպման, խմբագրման, մոնտաժման փուլերով, որտեղ որոշումներ կարող են կայացնել խմբագիրը, ռեժիսորը, մոնտաժողը, որոնց միջամտությամբ տեղեկությունը դառնում է հաղորդագրություն (message)՝ փոխանցվելով լսարանին: Երբեմն խաղի կանոնները որոշում են ավելի վերևում՝ պետությունը, լրատվամիջոցի սեփականատերը պայմաններ են պարտադրում, թելադրում են լապտերի գույն ու դիտանկյուն՝ դարձնելով հաղորդագրությունը քարոզչության մաս, ինչը պատերազմական իրավիճակում սառը և սթափ մտածողության լավագույն ընկերը չէ: Որպեսզի այդքան չբարդացնենք, պարզապես բավարար է մտապահել, որ, տեղեկությունը, մինչև մեզ հասնելը, կարող է այնքան խմբագրվել ու վերաձևակերպվել, մասնատվել ու ձևավորվել, որ երբեմն կարող է թվալ, թե լապտերով լրագրողը ոչ թե մութ մի տնից, այլ մեծահարուստի դղյակից է վերադառնում:

Մինչդեռ մեզ հասած տեղեկությունը ընդամենը (և հենց) մեզ հասած տեղեկությունն է:

Բայց 4. Հաղորդագրությունը նրա համար է, որ սրտին կպչի

Հակամարտությունը պարզեցնելու ու հեշտ բացատրելու համար մեդիան սիրում է ստեղծել հերոսների ու դավաճանների, յուրայինների ու թշնամիների կերպարներ: Անձակենտրոն քաղաքական համակարգեր ունեցող հասարակություններում հանրային տրամադրությունները հիմնված են բավականին խիտ զգայական շերտի վրա, իսկ պատերազմն իր սարսափելիությամբ ուռճացնում է այդ զգայական շերտը:

Այս շերտի հետ հաջողվում է աշխատել այն ինֆորմացիոն կենտրոններին, որոնք կարողանում են պատերազմի ժամանակ լսարանին միավորել ընդհանուր «սիրո» կամ ընդհանուր «ատելության» սուբյեկտի շուրջ: Հաշվի առնելով մեր հասարակությանը բնութագրող բևեռացած մտածողությունը՝ յուրայինից հերոս, հերոսից դավաճան, դավաճանից թշնամի ստեղծելու ճանապարհը սովորաբար մեկ քայլ է: Սա լրատվամիջոցների համար պարարտ հող է ստեղծում ուղերձները տեղ հասցնելու համար, հաճախ՝ լսարանի համար շատ աննկատ կերպով:

Պատերազմից զոհերի ու վիրավորների թվեր հաղորդելը գուցե նույն ազդեցությունը չունենա, որքան զոհերից մեկի մարդկային պատմությունը՝ հուզիչ մանրամասներով: Կամ, պատերազմի անհաջողության դեպքում, բարդ բացատրությունը, վերլուծությունը կարող է այնքան ազդեցիկ չլինել, որքան մի քանի անուններ հնչեցնելն ու մեղավորներ հռչակելը. դա պարզեցնում է խնդիրը, դիպչում զգացմունքներին:

Հետևապես կարևոր է ուշադիր լինել, թե որ դեպքերում է հաղորդագրությունը զգայական արձագանք առաջացնում և հիշել, որ, ամենայն հավանականությամբ, այն ուղարկվել է հենց նրա համար, որ սրտին կպչի:

Բայց 5. Ալգորիթմներն անում են իրենց գործը

Միշտ չէ, որ լապտերը պրոֆեսիոնալ լրագրողի ձեռքին է: Ժամանակակից տեղեկատվական միջավայրում հոսքերն ու աղբյուրները բազմազան են: Սոցիալական ցանցերում լապտերով լույս են տալիս ու պատմություններ են պատմում բոլորը, ինչն ավելի է բարդացնում տեղեկություններ փնտրողների խնդիրը: Պրոֆեսիոնալ լրագրողների տարածածը տարբերելը օգնում է ինչ-որ չափով ֆիլտրել տեղեկությունները. լրագրողներն, ամեն դեպքում, լապտերն օգտագործելու փորձ ու հմտություններ ունեն, նաև՝ լրագրողի ու լրատվամիջոցի աշխատանքի դեպքում հնարավոր է ստուգել աղբյուրը, իսկ անծանոթ էջերի պատկանելությունը, շահերն ու նպատակներն ավելի բարդ է հասկանալ:

Սոցցանցերում տեղեկությունները տեսնում ենք նաև ալգորիթմի ֆիլտրի միջով: Սոցցանցերի ալգորիթմները, ուսումնասիրելով յուրաքանչյուրիս առցանց վարքը, նախընտրությունները, մեր փոխարեն որոշում են, թե մենք ինչ պիտի տեսնենք: Այդ ալգորիթմներին օգնող տեխնիկաներից մեկը *#հեշթեգն* է, որը, բանալի բառերը դարձնելով ակտիվ հղումներ, արագացնում և մեծացնում է այդ հեշթեգը պարունակող բովանդակության տարածումը: Դա կարող է օգտագործվել կարևոր խնդիրը, թեման ուշադրության կենտրոնում պահելու համար, սակայն կարող է նաև նպաստել ապատեղեկատվության տարածմանը:

2014թ. մարտի 21-ի առավոտյան Սիրիայի ապստամբները ներխուժեցին թուրք-սիրիական սահմանին գտնվող հայաբնակ Քեսաբ գյուղը, տեղի հայերին հաջողվեց լքել բնակավայրը և տեղափոխվել Լաթաքիա: «Մինչ աշխարհը հետևում էր Սիրիայի այդ հատվածում իրադարձությունների զարգացմանը, նորաստեղծ #SaveKessab հեշթեգը կարծես թե այդ իրադարձությունների՝ հայությանը վերաբերող կողմին ուշադրություն դարձնելու նպատակ պետք է ունենար: […] Սակայն #SaveKessab հեշթեգով հատկապես կեղծ տեսանյութերը տարածվում էին արագ և մեծ համառությամբ՝ զանգվածային գնդակահարության տեսարաններ, որ Քեսաբի հետ ոչ մի կապ չունեին, խաղարկային ֆիլմերից կտրված կադրերով պատրաստված

տեսանյութեր»[8]: Որոշ աղբյուրներից տեղեկություններ էին տարածվում, թե ապստամբները Քեսաբը գրավել են Թուրքիայի կողմից, ինչից հետո շատերը սկսեցին զուգահեռներ տանել 1915-ի Հայոց ցեղասպանության և Քեսաբի դեպքերի միջև, #SaveKessab հեշթեգի կողքին սկսեցին օգտագործել նաեւ #ArmenianGenocide հեշթեգը: Ու ստացվում է, որ 1915թ.-ի ցեղասպանության ու Քեսաբում հայազգի զոհերի մասին կեղծ լուրերի միջև հավասարության նշան է դրվում, ինչը վնասում է նաև ցեղասպանության ճանաչմանը և կասկածի տակ դնում պատմական ճշմարտությունները, եզրակացնում է Media.am-ը՝ քննարկելով Քեսաբի դեպքերի լուսաբանումը:

Պատերազմների ժամանակ, երբ նույն թեմայով տեղեկություններն անընդհատ տարածվում են տարբեր աղբյուրներից, տարբեր հարթակներով ու ձևաչափերով, երբեմն թվում է, թե պատերազմի ամբողջ պատմությունն արդեն գիտենք և մեզնից լավ կոնֆլիկտաբան չկա: Մինչդեռ մոռանում ենք, թե մութ տան քանի սենյակ մենք դեռ չենք էլ մտել, իսկ ալգորիթմներն այդ ընթացքում անում են իրենց մութ գործը:

Բայց 6. Մութ տները մի քանի դուռ ունեն

Մարդիկ երբեմն մոռանում են, որ մեծ ու մութ տունը սահմանի մյուս կողմից էլ մուտքի դուռ ունի:

Պատերազմը միշտ ունենում է առնվազն երկու կողմ, որոնցից յուրաքանչյուրն իր լսարանին ներկայացնում է խնդիրն իր տեսանկյունից, իր ընտրած լույսի ներքո: Այն, ինչ մենք իմանում ենք պատերազմի մասին միայն մի կողմին հետևելով, ընդամենը մի տեսանկյունն է: Եթե մենք հակամարտության կողմ ենք, մեր պաշտոնական աղբյուրների ու լրատվամիջոցների տարածածը, անկախ ամեն ինչից, միայն մեր տեսանկյունն է: Հետևաբար՝ էական է չմոռանալ, որ մութ տները մի քանի դռներ ունեն, իսկ դռները, հաճախ, մի քանի բանալի:

Այս 6 բայց-երը մտապահելը օգտակար կարող է լինել պատերազմական իրավիճակներում մեր ձևավորած կարծիքներն ու պատկերացումները քննության առնելու համար: Քննադատական մտածողությունը օգտակար է միշտ, բայց հատկապես՝ անորոշ, վտանգավոր, անհասկանալի կամ անցումային շրջաններում, այդ թվում՝ պատերազմի: Իսկ ի՞նչ անել՝ ավելի կոնկրետ:

1. Ընդունել, որ **պատերազմը անհասկանալի է**. գիտակցելը, որ այն մի մեծ, անորոշ ու մութ օբյեկտ է, որը ոչ ոք ամբողջությամբ երբեք չի տեսել և չի տեսնելու, ավելի օգտակար կարող է լինել, քան ինքնախաբեությունը, թե հասկացել ենք՝ ինչ է կատարվում:
2. Ուշադիր **հետևել պաշտոնական լրահոսին**. նույնիսկ վստահությունը կորցրած պաշտոնական տեղեկատվությունը պատերազմի ժամանակ վատագույնների միջից լավագույն տարբերակն է, միևնույն ժամանակ, իհարկե, պետք է մտապահել, որ պետությունը պատերազմի կողմ է, ու պաշտոնական լրահոսը պետական ներքին քարոզչության մասն է:

8 Ինչպես է հեշթեգը կեղծ լուրեր տարածելու գործիք դառնում. #SaveKessab-ի դեպքը, media.am, March 31, 2014, https://media.am/hy/verified/2014/03/31/4272/.

3. Առանձնացնել և հետևել **մի քանի լրատվամիջոցների**, որոնք տարիների ընթացքում շահել են մեր վստահությունը պատասխանատու, որակյալ, ազնիվ աշխատանքով, որոնք ստուգում են տեղեկությունները, նշում են դրանց աղբյուրները, պահպանում են լրագրողական էթիկան։
4. **Բարդացնել և հարցեր տալ** հատկապես այն տեղեկությունների մասին, որոնք փորձում են մեզ պատերազմը պարզ ներկայացնել. բարդացնելը օգտակար է։
5. Լուրերին ծանոթանալ **թիրախային և գիտակցված կերպով**՝ օրվա կոնկրետ ժամերի. սոցիալական ցանցերի լրահոսն անվերջ և ավտոմատ թերթելը հազիվ թե որևէ այլ բան բերի, քան հոգեկան և մտավոր հավասարակշռության խախտումը։ Սա հաշվի առնելը հատկապես կարևոր է՝ նկատի ունենալով այն, որ սոցիալական ցանցերում այսօր բոլորը կարող են «լրագրող» լինել, հետևաբար՝ պետք է փորձել հասկանալ, թե ով է ասողը, որտեղից գիտի այն, ինչ ասում է, և արդյո՞ք ստուգելի է այդ ասելիքը։
6. Լսել և համադրել պատերազմը երկար տարիներ **հետազոտած գիտնականների և փորձագետների տեսակետները**. նրանք, ամեն դեպքում, մի բան գիտեն։

Անխոս, լավ է, որ կան մարդիկ, որոնք փորձում են լապտերներով լուսավորել մեր իրականությունը, երբ էլեկտրականությունն անջատված է։ Բայց երբեմն այդ լապտերներն օգնելու փոխարեն շփոթեցնում ու ապակողմնորոշում են։ Սեփական լապտերն ունենալը օգնում է ստուգել այլոց լապտերներով տեսածը։ Իսկ երբեմն մշուշն այնքան խիտ է, որ մեզ մնում է միայն վառել մոմն ու սպասել՝ մինչև կմիացնեն լույսը։

Թշնամու կերպարը

Հարություն Մանսուրյան
մեդիա մասնագետ

«Պատերազմում ոչ մի ճշմարտություն չկա»
Վիետնամի պատերազմը վավերագրական ֆիլմաշարից

Պատերազմը միշտ էլ արյուն է ու բռնություն, այն երբեք մարդկային դեմք չի ունեցել և չունի: Ինչ բարոյական արժեքներ էլ հետապնդեն հակամարտող կողմերը, ինչպիսի արդարացի պայքարի էլ դուրս եկած լինեն բանակները, միևնույն է՝ վայրագություններն ու խոշտանգումները, բռնության ամենազազրելի դրսևորումները ուղեկցում են հակամարտող բոլոր կողմերին ցանկացած պատերազմի ժամանակ:

Սովորաբար, մինչ թնդանոթային համազարկներն ու տանկային ճակատամարտերը, միմյանց դեմ են դուրս գալիս թշնամացած երկրների մեդիաները: Այդ պայքարում արյուն չկա, բայց հենց մեդիաներն են, որ լիցենզավորում են հազարավոր մարդկանց սպանությունները, խոշտանգումները, արդարացնում և հիմնավորում են սպասվող կոտորածներն ու բռնությունները: Իսկ երբ զենքերն են սկսում կրակել, մեդիան դառնում է պետականորեն կառավարելի և միանում է թշնամուն բարոյապես ոչնչացնելու պայքարին: «Օգտվեք միայն պաշտոնական լրահոսից» և «տարածեք միայն պաշտոնական տեղեկատվություն» կոչերը հնչում են հեռուստատեսությամբ, ռադիոյով, տարածվում են սոցիալական ցանցերով: Այդ պաշտոնական լրահոսը ստեղծում է թշնամու կերպարը, որը պիտի լինի հնարավորինս սարսափելի՝ զուրկ մարդկային հատկանիշներից: Զինվորի ձեռքը չպետք է դողա թշնամուն սպանելիս, նա իր դիմաց պետք է տեսնի ոչ թե մարդու, այլ պարզապես թիրախ, կամ էլ այն կերպարին, որն իր համար ստեղծել է պաշտոնական լրահոսին ծառայող մեդիան: Միջավայրը ներարկված է «սրբազան», «արդարացի», «հայրենական», մի խոսքով՝ ազատագրական պատերազմի և ոխերիմ թշնամուն ատելու քարոզչությամբ, հետևաբար՝ առանց խղճի խայթի կարելի է ցանկացած բան անել թշնամու հետ՝ տանջել, նվաստացնել, սպանել: Ավելին՝ ինչքան շատ ոսոխ վերացնեք, այնքան մեծանում է ձեր հերոս դառնալու հավանականությունը:

Օրինակներն ամենուր են և ամեն օր:

Փորձենք չկենտրոնանալ խնդրի բարոյական կողմի վրա, թե որ պատերազմում ով էր մեղավոր և ով՝ անմեղ, ով նախահարձակ եղավ, ով էր ստիպված պաշտպանվում, ում համար էր կռիվը հայրենական, իսկ ում համար՝ զավթողական, կամ թե՝ պատմական որ ժամանակահատվածում ում էր պատկանում այս կամ այն տարածքը: Այդ կետերից յուրաքանչյուրն, իհարկե, կարևոր է, բայց փորձենք խնդրին նայել այլ տեսանկյունից.

1. ինչպես է քարոզչությունը թշնամու կերպար ձևավորում՝ անբարո, վախկոտ հրեշի կերպարանք տալով հակառակորդին,

2. ինչպես է ատելության շուրջ միավորում սեփական ժողովրդին և սրբազան ազատամարտի կոչում նրան,

3. ինչպես է արդարացնում մարդկային կորուստները և այն զրկանքները, որ սեփական ժողովուրդը կրում է պատերազմի պատճառով,

4. ինչպես է ստում ու մանիպուլացնում, առաջին հերթին՝ հենց իր լսարանը։

Enemy image (թշնամու կերպարը) վավերագրական ֆիլմը[1] պատմում է, թե ինչպես է ԱՄՆ-ը սեփական ժողովրդին ներկայացրել իր վարած պատերազմները։ Ժողովրդավարության բաստիոնում խաբել են հնարավոր բոլոր միջոցներով՝ անգամ խոսքի ազատության պայմաններում։ Մինչ հեռուստատեսության ի հայտ գալը, ռադիոն և թերթերն էին պատերազմի մունետիկները։ Կային հոդվածներ, լուսանկարներ, որոնք քիչ էին ազդում կռվի դաշտից հազարավոր կիլոմետրեր հեռու բազմոցին պառկած միջին վիճակագրական ամերիկացու վրա, բայց երբ Վիետնամի պատերազմի ժամանակ հեռուստատեսությունը պատերազմի շունչն ու դաժան դեմքը բերեց ամերիկացիների տուն, երբ շարքային ամերիկացին տեսավ ոչ միայն ցինկե դագաղներով վերադարձող իր զինվորներին, այլև այդ զինվորների գազանությունները Վիետնամի խաղաղ բնակչության նկատմամբ, կոտրվեց «մաքուր» պատերազմի միֆը (ֆիլմի 57’30’’- 1.02’20’’ րոպեներ/։ Ամերիկյան հասարակությունն ընդվզեց։ Առաջին անգամ պատերազմը լուսաբանվեց բարիկադի երկու կողմերից, մարդկային ողբերգությունները չկորան չոր թվերի արանքում, և աշխարհի հզորագույն բանակը ստիպված էր անփառունակ դուրս գալ Վիետնամից։ Որովհետև **քարոզչությունը պարտվեց ազատ խոսքին**։ Բայց դա ազատ մեդիայի առաջին և միակ հայտնի հաղթանակն էր պատերազմների պատմության մեջ։ Այն դաս եղավ իշխանություններին, որ պատերազմում հաղթելու համար նախ պետք է հաղթել տեղեկատվական պայքարում։ Ազատ մամուլը լավ բան է, բայց ոչ պետության համար, որը պատերազմում է։

Արդեն Իրաքի, Աֆղանստանի, Սիրիայի պատերազմներում լրագրողները չունեին այն ազատությունը, որ կար Վիետնամի ժամանակ։ Նրանց թույլ էին տալիս գտնվել առաջնագծում, դիակներ նկարել, հատուկ նրանց համար պատերազմական միջոցառումներ էին կազմակերպում /1.16’38 - 1.19’00’’/, բայց թույլ չէին տալիս ազատ տեղաշարժվել և աշխատել։ Բի-Բի-Սին այդպիսի մի վավերագրություն[2] է նկարել Իրաքի կռվում արևմտյան լրագրողների աշխատանքի մասին։

Ատելության անատոմիան

Ատելությունն այն զգացմունքն է, որը սովորաբար նախորդում է թշնամանքին։ Ինչպես ընդհանուր թշնամին է միավորում մարդկանց տարբեր խմբերի, այնպես էլ՝ ընդհանուր ատելությունը։ Ատելության քարոզը պատերազմների մշտական ուղեկիցն է։ Սա դիտարկենք ռուս-ուկրաինական կոնֆլիկտի օրինակով։

Կան ազգեր, ժողովուրդներ ու պետություններ, որոնք դարավոր ու պատմական թշնամանք ունեն իրար հանդեպ, ինչպես, օրինակ, հայերն ու թուրքերը, հրեաներն ու արաբները, բայց դիտարկենք ռուսներին և ուկրաինացիներին, որոնք, կարծես թե, այդ շարքից չէին։ Շատերն էին կարծում, թե նրանք «համարյա նույն ազգն են, ոնց որ թուրքերն ու ադրբեջանցիները»։ Բայց 2022-ի փետրվարից հետո պարզվեց,

1 Enemy Image, վավերագրական ֆիլմ, https://www.youtube.com/watch?v=3VCWA2XNZgc

2 “War Feels Like War” - The Iraq War Media Story, BBC, https://www.youtube.com/watch?v=wAsmx08aLiw

որ ռուս-ուկրաինական հարաբերությունները միշտ չէ, որ հարթ են եղել. երկու կողմերի պատմաբանները գտան շատ խութեր ռուս և ուկրաինացի ժողովուրդների դարավոր եղբայրության ընթացքում: Բայց Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ էթնիկ շատ կոնֆլիկներ վերաճեցին պատերազմների (հայ-ադրբեջանական, վրաց-աբխազական, ռուս-չեչենական), ուկրաինացիներն ու ռուսները հաշտ ու խաղաղ շարունակում էին հարևանություն անել: Կոնֆլիկտը նկատելի դարձավ[3] մոտ 20 տարի առաջ, սրվեց 2014-ի Ղրիմի բռնակցումից հետո, ակնհայտ դարձավ 2015-ի Դոնբասի պատերազմում և մեծամասշտաբ պատերազմի վերաճեց 2022-ին:

Դրան մեծապես նպաստեցին պուտինյան քարոզչության դրոշակակիրները ռուսական հեռուստաալիքներում: 2022-ի փետրվարի 24-ից առաջ և հատկապես հետո ռուսական հեռուստաալիքները և Կրեմլի սոցցանցային քարոզիչները (Մարգարիտա Սիմոնյան, Դմիտրի Կիսելյով, Վլադիմիր Սոլովյով), մյուս կողմից էլ հակառուսական Տելեգրամ ալիքները (NEXTA Live, УНИАН, Скоро Война) և արևմտյան մեդիան սկսեցին մի կատաղի պայքար, որն իր թեժությամբ չի զիջում առաջնագծի կռիվներին:

Խնդիր է դրված հնարավորինս անսխալական և ուժեղ ներկայացնել սեփական կողմին, և բարոյազուրկ ու վախկոտ՝ հակառակորդին: Կա միայն սև ու սպիտակ. մենք անմեղ զոհ ենք, մեր պայքարն ինքնապաշտպանական է և արդար, իսկ նրանք չար ու մութ ուժերն են, որոնց ցանկացած գնով պետք է վերացնել:

Փորձեք Յուտյուբում փնտրել Stepan Bandera և դիտել այս երկու նյութերը: Ուկրաինական տեսանյութում[4] նա ազգային հերոս ու փրկիչ է, History Hustle-ի տեսանյութում՝ նացիստ մարդասպան[5]:

Նկարը՝ ուկրաինական “Stepan Bandera: Making History” ֆիլմից



Նկարը՝ հոլանդական Stepan Bandera and the UPA - How Ukrainian Nationalism led to a Polish Genocide (1943 - 1945)

Ռուսական կայքերում, օրինակ, Риа Новости-ում[6], այդ անունն ասոցացվում է հնարավոր և անհնար անմարդկային հանցագործությունների հետ և դարձել է Հիտլերի հոմանիշը:

3 Россия против Украины. Как дело дошло до большой войны https://www.dw.com/ru/rossija-i-ukraina-kak-on, DW, i-okazalis-na-poroge-bolshoj-vojny/a-60223489

4 https://www.youtube.com/watch?v=NC9zI60zLtQ&t=736s&ab_channel=UATVEnglish

5 https://www.youtube.com/watch?v=luFVfcW7yAE&ab_channel=HistoryHustle

6 В РВИО заявили, что зверства УПА* не имеют срока давности, https://ria.ru/20221014/rvio-1823880875.html

Խրամատի մի կողմում Բանդեռան մարմնավորում է ատելի թշնամու կերպարը, որը միավորում է ռուսներին՝ նացիստների դեմ պայքարում, մյուս կողմում նա ընդօրինակման արժանի սկզբունքային հերոս է, որը միավորում է ուկրաինացիներին՝ դուրս գալու զավթիչների դեմ անհավասար ու անձնազոհ կռվի։ Ռուսական քարոզչությամբ «բանդեռականները» շովինիստ մանկասպաններ են, Ուկրաինայում՝ ռուսական ագրեսիան անձնազոհ կանգնեցնողներ։ Մի կողմին միավորում է ատելությունը բանդեռականների նկատմամբ, մյուս կողմին ոգևորում և միավորում է նրա ազատատենչ ազգային ոգին։

Ով է եղել իրական Բանդեռան՝ էական չէ։ Կարևորն այն պատմական պատմուճանն է, որ նրան հագցնում են հակամարտող կողմերը՝ ատելության կամ սիրո, թշնամանքի կամ հերոսության շուրջ մարդկանց միավորելու համար։

«Մարդասպան» բառը բացասական ենթատեքստ և իմաստ ունի ցանկացած լեզվում։ Բայց մարդկային պատմությանը հայտնի են շատ «երևելիներ», «հերոսներ», անգամ «սրբեր», որոնք հերոսացվել կամ սրբադասվել են սպանելով։ «Մի՛ սպանիր» պատվիրանը ընտրողաբար է գործում։ Եթե սպանում ես թշնամուդ, ապա ինչքան շատ սպանես, այնքան մեծանում է հերոս դառնալու հավանականությունդ։

Հերոսության անատոմիան

«Քանի դեռ ապրում եք, ձեր պարագան կասկածելի է» Ալբեր Քամյու, Անկում

Վազգեն Սարգսյանին ու Կարեն Դեմիրճյանին Ազգային հերոսի կոչում շնորհվեց նրանց սպանությունից հետո։ Քանի դեռ նրանք ողջ էին ու ծառայում էին Հայաստանին որպես վարչապետ և ԱԺ նախագահ, նրանք հերոսներ չէին։ Ժամանակակիցները կհիշեն, որ ամենևին էլ միանշանակ դրական չէր հասարակության վերաբերմունքը նրանց նկատմամբ[7]։ Ու եթե չլիներ 1999-ի հոկտեմբերի 27-ի ոճրագործությունը, դժվար թե նրանք հերոսացվեին։

Վերջին 3 տարում Հայաստանում Ազգային հերոսի բարձրագույն կոչումը շնորհվել է 10 հոգու, որից 9-ը ռազմիկներ են[8]։

Քանի որ 44-օրյա պատերազմից հետո այս թեման շատ ավելի ցավոտ է ընկալվում, եկեք «հերոսականության օրինաչափությունը» ևս դիտարկենք ռուս-ուկրաինական կոնֆլիկտի լույսով։

2014թ. Ղրիմի բռնակցումից, Լուգանսկի և Դոնեցկի ինքնահռչակ հանրապետությունների կազմավորումից, Սիրիայում ռազմական գործողություններից հետո Վլադիմիր Պուտինի՝ առանց այն էլ բարձր վարկանիշը Ռուսաստանում հասավ մոտ 90%-ի՝ աննախադեպ ցուցանիշ այդ երկրի համար։ Շատերի համար նա հերոս էր՝ կամային առաջնորդ, Ալեքսանդր Նևսկու, Իվան Ահեղի ու Իոսիֆ Ստալինի գործերի շարունակողը։ Նա ընդլայնում էր Ռուսաստանի առանց այդ էլ անծայրածիր տարածքները, վախ էր ներշնչում արևմտյան ոչ բարեկամ երկրներին։

7 Քոչարյանի և Դեմիրճյանի պայքարը 1998-ի նախագահական ընտրարշավում | Նորագույն պատմություն

8 Հայրենիքի շքանշանի արժանացած անձանց ցանկ https://president.am/hy/orders/46

Պուտինյան վարկանիշը փոփոխվեց 2022-ի ռուս-ուկրաինական պատերազմի ընթացքում. առաջին ամսից հետո՝ մարտին, այն բարձրացավ պատերազմի սկզբի համեմատ մոտ 10%-ով, սեպտեմբերի զորահավաքից հետո իջավ 77%-ի և շարունակում է իջնել ռուսական զորքի անհաջողությունների ֆոնին։

Ի տարբերություն Վլադիմիր Պուտինի՝ Վոլոդիմիր Զելենսկին մինչ պատերազմը ցածր վարկանիշ ունեցող ղեկավարներից էր։ 2021-ի նոյեմբերին երկրի ներսում նա ուներ 33% վստահություն, անգամ նրա հրաժարականի հարցն էր բարձրացվում[9]։ Պատերազմից 10 օր առաջ՝ միայն 24,6%։ Պատերազմի 9 ամիսների ընթացքում Զելենսկուն վստահում է ուկրաինացիների 90%-ից ավելին[10]. նա դարձել է համաշխարհային հերոս, որ դիմակայում է չարին և փրկում է աշխարհը։

Ինչպե՞ս Զելենսկին դարձավ հերոս։ BBC-ի՝ «Զելենսկու ուղին. կատակերգու դերասանից մինչև պատերազմի ժամանակ երկրի ղեկավար»[11] նյութում բերվում է Զելենսկու վերելքի մի քանի դրվագ, և դրանցում ակնհայտ է մեդիայի ու հաղորդակցության դերը. ինչպես նա ընտրվեց երկրի պրեզիդենտ՝ օգտագործելով սոցիալական ցանցերը, ինչպես էր իր կոչերով ոգևորում ուկրաինացիներին ռուսների դեմ պայքարում։ Ի դեպ, 2014-ին Դոնեցկի թերթերից մեկին տված հարցազրույցում Զելենսկին ասում էր, որ ռուսները և ուկրաինացիները մեկ ժողովուրդ են[12], 7 տարի անց նա Թվիթերում գրեց հակառակը[13]՝ ուկրաինացիներն ու ռուսները մեկ ժողովուրդ չեն՝ պատասխանելով Պուտինի նույն պնդմանը, թե ռուսները և ուկրաինացիները նույն ժողովուրդն են։

Իր պրեզիդենտության սկզբում Զելենսկին համարվում էր ռուսամետ քաղաքական գործիչ, որը միջազգային հարթակներում հիմնականում խոսում էր ռուսերեն և առաջնորդ էր դարձել Ռուսաստանի հետ կոնֆլիկտը հարթելու խոստումով։ Կան հետաքրքիր ուսումնասիրություններ, թե ինչ կոչերով է նա դիմել ռուսներին պատերազմի ժամանակ, նաև ինչ կոչ է արել արևմտյան երկրներին՝ ռուսների պահով։ Այս իրարամերժ կոչերին ու խոսքերին քչերն են ուշադրություն դարձնում, փոխարենը մենք ամեն օր միջազգային մեդիայով լսում ենք Ուկրաինայի՝ զինվորական շապիկով առաջնորդի գեղեցիկ ուղերձներն աշխարհին և իր ժողովրդին։

Նկարագրված միտումները շատ նման են Հայաստանի վերջին շրջանի պատմությանը։ Եթե դիտարկենք հայ-ադրբեջանական կամ հայ-թուրքական հարաբերությունները վերջին 30 տարում, կտեսնեք, թե այդ կարճ պատմական ժամանակահատվածում քանի անգամ է կտրուկ փոփոխվել մեր հռետորաբանությունը, և ինչքան ծայրահեղ են եղել քարոզչական թեզերը։ Ամենաթարմ օրինակը Նիկոլ Փաշինյանի վերջին 4 տարվա իրարամերժ ելույթներն[14] են Արցախի կարգավիճակի և խնդրի լուծման բանաձևերի մասին՝ «Արցախը

9 https://petition.president.gov.ua/petition/127256

10 IRI Ukraine Poll Shows Overwhelming Support for Zelensky, Confidence in Winning the War, Desire for EU Membership , https://www.iri.org/news/iri-ukraine-poll-shows-overwhelming-support-for-zelensky-confidence-in-winning-the-war-desire-for-eu-membership/

11 Путь Зеленского: от комика и актера до лидера страны в военное время, https://www.bbc.com/russian/media-61000746

12 “Мы с русскими один народ”. Что Зеленский говорил на гастролях в Донецке и Горловке в апреле 2014 года, https://rnk-concept.ru/84407

13 https://twitter.com/ZelenskyyUa/status/1410512843603054592

14 https://www.youtube.com/watch?v=EDwPVKmK22M

Հայաստան է և վերջ»-ից մինչև «Արցախը ոչ ամբողջությամբ պիտի լիներ, ... չէր կարող ամբողջությամբ լինել հայկական», հետո «Միջազգային հանրությունը մեզ կրկին ասում է՝ մի փոքր իջեցրեք Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցում ձեր նշաձողը» և «Ադրբեջանն ասում ա՝ մենք չենք ուզում Հայաստանի հետ Ղարաբաղի հարցը քննարկել, ... ուրեմն՝ քննարկեք Ղարաբաղի հետ»։

Հերոսականության քարոզը շարունակվում է անընդհատ։ Հ1-ով եթեր է գնում Ցվետանա Պասկալևայի ռուսերեն «Նվիրյալները» շարքը, որը մեծ պաթոսով ներկայացնում է արցախյան կռիվների նահատակներին այնպիսի մանրամասներով, որ անգամ նրանց կողքին կռվողները չէին կարող իմանալ։ Բայց հաղորդաշարի հեղինակն առանց կասկածի պատմում է, թե ինչ էր մտածում մարտիկը մահվանից վայրկյաններ առաջ՝ հերոսացնելով նրա կերպարը։ Մեր, մեղմ ասած, ոչ այնքան մեդիագրագետ սպառողի համար, այդպիսի քարոզն ընկալվում է որպես հայրենասիրության դրսևորում, մինչդեռ իրականում դա այն սուտն է, որով կերակրում են հասարակությանը։

Ստի անատոմիան

Թշնամու ու հերոսի կերպարների ստեղծման, ատելության ու համակրանքի համար պայքարի անբաժան մաս է սուտը։ Տեխնոլոգիաներն այն աստիճան են զարգացել, որ անգամ պրոֆեսիոնալներն են խաբեբաների թակարդն ընկնում։ 2022-ի մարտին համացանցում հայտնվեցին երկու տեսանյութեր՝ մեկում Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին հայտարարում էր պատերազմում իր երկրի պարտության մասին, մյուսում Ռուսաստանի նախագահը (Վլադիմիր Պուտինի դեմքով) դադարեցնում էր պատերազմը։ Պարզվեց, որ երկու տեսանյութերն էլ կեղծ էին, այսպես կոչված «դիփֆեյք»։ Ու մինչ Ֆեյսբուքն ու Յություբը գլխի կընկնեին ու կհեռացնեին այդ տեսանյութերը, դրանք «պայթեցրին» սոցիալական ցանցերը։ Շատ հայտնի լրատվամիջոցներ շտապելով հրապարակել էին դրանք՝ ռուսականներն արդեն հաղթանակ էին տոնում Զելենսկու «կապիտուլյացիայից» հետո, ուկրաինականներն էլ ուրախացել էին, որ Պուտինը «խելքի է եկել»։ Այս դեպքից հետո Դոյչե Վելլեն փորձեց նշել այն մանրուքները, որոնք դեռ մատնում են կեղծիքը՝ ատամները, ճակատի մազերը, ականջողերը և այլն։ Բայց, ակնհայտ է, որ դա էլ ժամանակի հարց է, տեխնոլոգիաները կկատարելագործվեն, և շատ ավելի բարդ կդառնա դիփֆեյքն իրականից տարբերելը։

Բայց դա ստելու ամենատարածված ձևը չէ։ Կոնֆլիկտների ժամանակ սովորաբար այդպես պրոֆեսիոնալ ստելու համար գործի են դրվում սովորական «ֆեյքերը», որ լցնում են մեդիադաշտն ու սոցիալական ցանցերը ամենաանհավանական պատմություններով, պետական քարոզիչները կոնտեքստից կտրում են հարցազրույցները, ֆոտոշոփում և տարածում են տարիների վաղեմության կամ բոլորովին այլ տեղում արված նկարներ ու տեսանյութեր, կարճ ասած՝ ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով մանիպուլացնում են թե՛ ներսի, թե՛ դրսի սպառողին։ Դեռ 45 տարի առաջ Հոլիվուդը նկարել է մի ֆիլմ՝ Խաբեություն, որը մինչև հիմա արդիական է։

Ռուսական քարոզչամեքենան 2014-ին հրապարակեց տեսանյութ, որտեղ մի կին որպես ականատես նկարագրում էր ուկրաինացի նացիոնալիստների կողմից

երեքամյա մի տղայի խաչելու տեսարանը։ Միակ «ականատեսի» պատմած մանրամասները, թե ինչպես են ուկրաինացի նացիոնալիստները Քրիստոսի նման խաչել ռուս երեխային, շատ արագ տարածվեցին ռուսական մեդիա դաշտում։ Երեխային խաչելու որևէ այլ ապացույց չեղավ, պարզվեց, որ դա հերթական ֆեյքն էր, բայց ռուս հասարակայնության կարծիքն արդեն բորբոքված էր «ուկրաինացի ֆաշիստների» դեմ, իսկ ռուսական բանակն արդեն Դոնբասում էր։

Նայեք անպայման Դուդի այս հարցազրույցը, տեսեք, թե Ռուսաստանում ինչ աներևակայելի ստեր են հորինվել թշնամու կերպար ստանալու համար։

Պետական քարոզչությունը վաղուց արդեն չի սահմանափակվում դասական մեդիադաշտով՝ հեռուստատեսությամբ ու ռադիոյով, այն լայնորեն տարածվում է համացանցով, սոցիալական հարթակներով։ Պարզ է, որ քարոզիչներն անում են իրենց գործը, բայց փաստ է նաև, որ սպառողը գրեթե ջանք չի գործադրում չխաբվելու համար։ Հակառակը, երբեմն ճշմարտությունը լսելն ու իմանալը շատ ավելի ծանր է, քան խաբված լինելը, մարդը սովորաբար հակված է հավատալ նրան, ինչն իրեն հաճելի է՝ անկախ այն բանից ճի՞շտ է դա, թե՞ սուտ։

Պատերազմի առաջին զոհը. ապատեղեկատվությունն ու հակամարտությունները

Լուսինե Գրիգորյան
մեդիագրագիտության մասնագետ

Քարոզչական մանիպուլյացիաներն ու սուտը պատերազմների պես հին են։ Դեռ մեր թվարկությունից առաջ չինացի ռազմական տեսաբան Սուն Ցզին «Երկ ռազմարվեստի մասին» հայտնի աշխատությունում նկարագրում է ինֆորմացիոն պատերազմը. «Բոլոր պատերազմները հիմնված են խաբեության վրա։ Երբ մենք կարող ենք հարձակվել, մենք պետք է անկարող թվանք, երբ օգտագործում ենք մեր ուժերը, պիտի անգործունակ երևանք, երբ մոտ ենք, պետք է թշնամուն ստիպենք հավատալ, որ հեռու ենք. երբ հեռու ենք՝ հավատալ, որ մոտ ենք»[1]։

Սուն Ցզիի փիլիսոփայությունը 13-րդ դարում վարպետորեն կիրառում էր Չինգիզ Խանը, որն իր բանակի մասին ահասարսուռ տեղեկություններ էր տարածում՝ խուճապի մատնելով ու բարոյազրկելով հակառակորդին և հեշտորեն գրավելով նոր քաղաքներ։ Արդեն 20-րդ դարում այդ ժամանակվա «նոր մեդիան»՝ ռադիոն, հեռուստատեսությունը, դարձավ ինֆորմացիոն պատերազմի գործիք։

Վիետնամի պատերազմը հայտնի է որպես պատմության առաջին հեռուստատեսային պատերազմը. առաջին անգամ ռազմական գործողությունները լուսաբանվում էին այդքան մեծ ծավալով։ Մեդիան ձևավորում էր հանրային կարծիք, որը մեծ ազդեցություն ունեցավ պատերազմի ընթացքի վրա։ Դա նկատելով, նախագահ Ջոնսոնի թիմը 1967 թվականին քարոզչական արշավ նախաձեռնեց, որը հաճախ անվանում են «Լավատեսության արշավ» (Optimism Campaign)։ Թիրախավորելով Վաշինգտոնում և Նյու Յորքում գործող հեղինակավոր լրագրողներին՝ թիմը լավատեսական լուրեր և մոտալուտ հաղթանակի խոստումներ էր տարածում, չափազանցնում էր հակառակորդի կորուստները և սեփական հաջողությունները։ Արշավը հաջողություններ արձանագրեց, օրինակ, The Times-ի ռազմական խմբագիր, Պուլիտցերյան մրցանակ ստացած Հանսոն Բոլդուինը 1967թ. դեկտեմբերին գրեց, թե «ըստ հետախուզության փորձագետների՝ թշնամին ավելի թույլ է, քան թվում է», իսկ հանրային կարծիքի հարցումները 6 ամսում 15% փոփոխություն նկատեցին. մարդկանց մոտ 50%-ը 1967-ի վերջին կարծում էր, թե ամերիկացիները հաջողությունների են հասնում Վիետնամում։ Քարոզչության հաջողությունը կարճաժամկետ էր, ամերիկյան հանրությունը ավելի ու ավելի էր ընդվզում պատերազմի դեմ։ Հինգ տարի անց ամերիկացիներն սկսեցին դուրս բերել ուժերը Վիետնամից, և, ի վերջո, 1975թ. Հարավային և Հյուսիսային Վիետնամները միավորվեցին՝ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն կազմելով[2]։

Ապատեղեկատվությունը կարող է նաև հրահրել պատերազմ։ 1890-ականներին լսարանի ուշադրության համար պայքարում էին ամերիկյան երկու թերթեր՝ Պուլիտցերի խմբագրած New York World-ը և Հերսթի խմբագրած New York Journal-ը։

[1] The Art of War, http://classics.mit.edu/Tzu/artwar.html
[2] Moïse, 2017, Lyndon Johnson's War Propaganda, The New York Times https://www.nytimes.com/2017/11/20/opinion/johnson-propaganda-vietnam-westmoreland.html

Մարդկանց ուշադրությունը գրավելու համար նրանք սենսացիոն վերնագրերով ու պատկերներով էին պատմում Իսպանիայից Կուբայի անկախացման պայքարի մասին: Շատ մասնագետներ համարում են, որ այս մանիպուլյատիվ լուսաբանումը ամերիկացիներին տրամադրեց իսպանացիների դեմ և նպաստեց ամերիկա-իսպանական պատերազմի բռնկմանը: Ի դեպ, հենց այս թերթերի մրցակցությունից է ծնվել «դեղին մամուլ» եզրույթը, որով բնորոշում են ակնահաճո, սենսացիոն, բամբասկոտ լուրերով լսարան գրավող լրագրությունը: 19-րդ դարի սկզբում Պուլիտցերի թերթը, իսկ հետո նաև նրա մրցակից թերթը, տպում էին դեղին գիշերազգեստով տղայի մասին ծաղրանկարների շարք, որն անվանում էին “Yellow-Kid Journalism”, հետո՝ “Yellow journalism” (դեղին լրագրություն/դեղին մամուլ)[3]:



Ծաղրանկարի հեղինակ՝ Լեոն Բարրիտ, 1898, պահվում է Կոնգրեսի գրադարանի տպագրության և լուսանկարների բաժնում, History.com

Այս բոլոր պատմական օրինակների և ժամանակակից պատերազմների միջև բազմաթիվ զուգահեռներ կարելի է տանել: «Պատերազմի դաշտում առաջին զոհը ճշմարտությունն է». մասնագետները վիճում են, թե ով է առաջին անգամ արտասանել այս հայտնի խոսքը, բայց այն տարբեր ժամանակներում տարբեր բառերով արտասանել են շատ քաղաքական ու ռազմական գործիչներ ու գիտնականներ:

[3] Kennedyaug L, 2019, Did Yellow Journalism Fuel the Outbreak of the Spanish-American War?, https://www.history.com/news/spanish-american-war-yellow-journalism-hearst-pulitzer

Արցախյան 44-օրյա պատերազմը

2020 թվականին սկսված և 44 օր շարունակվող պատերազի ողջ ընթացքում Հայաստանի հասարակությունը գամված էր էկրաններին՝ սպասելով, որ *#հաղթելուենք*: Երկրում հայտարարված ռազմական դրությամբ[4] սահմանափակվել էր մամուլի ազատությունը. արգելվում էր պաշտոնականից բացի որևէ այլ տեղեկատվության տարածումը Հայաստանում: Լրատվամիջոցները պահպանում էին այս կանոնը, իսկ դեպքի վայրում աշխատող լրագրողների, օրինակ, Թաթուլ Հակոբյանի կամ Էդիկ Բաղդասարյանի գրառումներն ու ակնարկները ծանր իրավիճակի մասին արժանանում էին լսարանի քննադատությանը:

Փաստեր ստուգող լրագրող Անի Գրիգորյանը, որ պատերազմի օրերին «Փաստերի ստուգման հարթակի» գլխավոր խմբագիրն էր, նշում է. «Ամենադժվարը թերևս հենց պաշտոնական տեղեկատվությունը ստուգելն էր: Մի կողմից տրամադրվող տեղեկատվությունը բավականին սահմանափակ էր, մյուս կողմից դրա ստուգումը գրեթե անհնար էր այդ պահին: Ես պատերազմի օրերին աշխատում էի նաև Արցախում: Շատ դեպքերում արձանագրում էի, որ տեղում կատարվողն ու պաշտոնական տեղեկատվությունը հակասում են, սակայն ռազմական դրության սահմանափակումները, որոշ չափով գրաքննությունը ստիպում էին լռել»[5]:

Պաշտոնական քարոզչության դեմք դարձած Արծրուն Հովհաննիսյանը, որին սկզբում անվերապահորեն հավատում, իսկ պատերազմից հետո մեղադրում էին լսարանին խաբելու համար, 2021թ.-ին «Սպուտնիկ Արմենիային» տված հարցազրույցում ասում է.

«Ես անլուրջ եմ համարում քարոզչության հետ կապված մեղադրանքները, քանի որ պատերազմների ժամանակ այլ տեսակ չի լինում քարոզչությունը: Լինում են իհարկե սխալներ, չճշտված կամ չհաստատված տեղեկություններ, բայց ոչ թե սխալ քարոզչություն: Քարոզչությունը դրա համար էլ կոչվում է քարոզչություն, որ մարդկանց ոգին բարձր պահի: Ես պատերազմի ժամանակ կորցրել եմ ընկերներ, հարազատներ, փեսայիս... Այդ օրերին լացակումած եմ խոսել, բազմաթիվ մարդիկ՝ ընկերներ, գեներալներ, քեռուս տղան, որ Ջաբրայիլում էր, զանգել, խնդրել են՝ Արծրուն, վաղը եթե անգամ երեկոյան պատերազմը պետք է կանգնի, առավոտյան զինվորներին պիտի մարտի դաշտ տանենք, ոգեղեն խոսա, որ երեխեքը կարողանան անել դա: Ես բարձր տոնը պահել եմ կյանքիս գնով, թաքուն լացել եմ, հետո դուրս եկել եթեր ու փորձել ոգի տալ»[6]:

Որքան էլ պաշտոնական տեղեկությունը երկու կողմերից կողմնակալ ու թերի էր, բաց աղբյուրները[7] օգնում էին լրագրողներին ստուգել դրանք: Այսպես, երբ Արցախի պաշտոնյաները տարածեցին տեղեկություն, թե «հօդս է ցնդել» ադրբեջանական Գյանջայի օդանավակայանը, համացանցում հայտնվեցին «մինչև

[4] Ռազմական դրություն՝ միայն պաշտոնական տեղեկատվություն, https://media.am/hy/newsroom/2020/09/27/24236/

[5] Փաստերի ստուգումը պատերազմի օրերին. խոչընդոտներ և բաց աղբյուրներ, https://media.am/hy/crossroad/2020/12/23/25600/

[6] «Թաքուն լացել եմ, հետո դուրս եկել եթեր». բացառիկ հարցազրույց Արծրուն Հովհաննիսյանի հետ» , 01.02.2021, Սպուտնիկ Արմենիա, https://armeniasputnik.am/20210201/taqun-lacel-em-heto-durs-ekel-eter-bacarik-harcazruyc-artsrun-hovhannisyani-het-26300495.html

[7] Բաց աղբյուրները բոլորին հասանելի աղբյուրներն են, օրինակ, առցանց քարտեզները, տեղեկությունների շտեմարանները, օդային թռիչքների քարտեզն ու չվացուցակները, պաշտոնական փաստաթղթերը...

և հետո» լուսանկարներ, փաստեր ստուգող լրագրողները կարողացան պարզել, որ այդ նկարները կապ չունեն Գյանջայի հետ. իսկ հետագայում արբանյակային պատկերների միջոցով ստուգեցին և համոզվեցին, որ Գյանջայի օդանավակայանը տեղում է և չի վնասվել[8]։

Չնայած սահմանափակումներին, սոցցանցային հարթակներում հայկական լսարանին հասնում էին նաև հակառակորդի կողմից տարածվող նյութերը, այդ թվում՝ հին կամ փոփոխված լուսանկարներ, տեսանյութեր, կեղծ լուրեր, դավադրության տեսություններ։

Հայերի վստահությունը շահելու համար ադրբեջանցիները բացում էին հայկական տեղեկատվական աղբյուրներին նմանակող էջեր սոցիալական ցանցերում, օրինակ, Հանրային հեռուստատեսության լրատվական ծառայության տարբերանշանով։

Հանրային հեռուստաընկերության իրական և ադրբեջանական կեղծ էջերը Ֆեյսբուքում՝ 2020թ. պատերազմի օրերին

Իրական



կեղծ



Իրական (✓) և կեղծ (✗) հաշիվներն այս դեպքում բավական հեշտ է տարբերակել։ Թեև որպես գլխավոր նկար օգտագործված է «Լուրեր»-ի հայտնի տարբերանշանը, սակայն ուշադրություն դարձնենք էջում առկա տեղեկությանը.

✓ **ստեղծվել է ավելի վաղ՝ 2018 թվականի սեպտեմբերին**	✗ **կեղծ էջը՝ 2020-ի հոկտեմբերի 10-ին**
✓ **ունի ավելի մեծ լսարան՝ մոտ 180,000**	✗ **6 հավանում (հոկտեմբերի 10, 22:00-ի դրությամբ)**
✓ **“About” բաժնում կան կոնտակտային տվյալներ, կայքի և սոցցանցային այլ հաշիվների հղումներ**	✗ **չկա կոնտակտային տվյալ, բայց կա խայծ նկարագրություն՝ «Հետևեք «Լուրեր» լրատվականի էջին՝ կարևոր ու հավաստի տեղեկատվություն ստանալու համար»:**

[8] Գյանջայի օդանավակայանը «հօ՞դս է ցնդել». արբանյակային լուսանկարները հակառակն են ապացուցում, 27.11.2020, Փաստերի ստուգման հարթակ, https://fip.am/14023

Փաստեր ստուգողները հայկական աղբյուրների տարածած կասկածելի տեղեկություններին զուգահեռ ստուգում էին նաև ադրբեջանական կեղծիքները, ապացույցներ հավաքում պատերազմական հանցագործությունների մասին, որոնք Ադրբեջանը «կեղծ լուր» էր անվանում: Օրինակ՝ Փաստերի ստուգման հարթակը կարողացավ ապացուցել, որ Ադրբեջանը պատերազմի ընթացքում օգտագործել է սպիտակ ֆոսֆոր, որի կիրառությունն արգելված է միջազգային կոնվենցիաներով[9]: Իսկ Media.am-ը հետաքննություն իրականացրեց՝ ցույց տալու, թե ինչպես է Ադրբեջանը վարձկաններ տեղափոխել Սիրիայից և ներգրավել նրանց հայերի դեմ պատերազմում[10]:

Պատերազմի ընթացքում ստուգված կեղծիքների մասին ավելին կարելի է կարդալ media.am-ում[11]:

2020թ. նոյեմբերի 9-ից հետո ապատեղեկատվության ծավալները Հայաստանում ահագնացան, պատերազմի ցավն ու մարդկանց զգացմունքները մանիպուլացվում էին ու շահարկվում ներքաղաքական պայքարի համար: Ապատեղեկատվության դաշտ էր ստեղծում նաև իշխանությունների կցկտուր, իրարամերժ, թերի հաղորդակցությունը հասարակության ու մեդիայի հետ՝ զոհերի, գերիների, սահմանային իրավիճակի վերաբերյալ: Օրինակ՝ 2021թ. ապրիլի 8-ի երեկոյան տեղեկություն տարածվեց, որ Բաքվից Հայաստան է վերադառնալու գերիների խումբ: Գերիներն այդպես էլ չեկան, թեև լուրը հաստատել էին վարչապետի և փոխվարչապետ Տիգրան Ավինյանի մամուլի խոսնակները: «Սա հարուցեց մեծ զայրույթ ու դարձավ իրար հակասող հայտարարությունների առիթ: Գերիների վերադարձի լուրը առաջինը հայտնել էր freenews.am-ը[12], որի տնօրենը ԱԺ փոխնախագահ Ալեն Սիմոնյանի կինն է: Իսկ Սիմոնյանը հաջորդ օրը «Ազատություն TV»-ի եթերում ասաց[13], որ գերիների վերադարձը ոչ թե պայմանավորվածություն էր, այլ «հույս, որ ինքնաթիռի թռիչքը իր հետ լավ լուր կբերի»: Եվ ներողություն խնդրեց ապատեղեկատվության համար», - թեման վերլուծեց Media.am-ի լրագրողը[14], իսկ ավելի մանրամասն տեսանյութ պատրաստեց Սիվիլնեթը[15]:

Ուկրաինայի պատերազմը

2022թ. փետրվարի 24-ին ռուսական բանակը ներխուժեց Ուկրաինա, սկսվեց երկարատև դաժան պատերազմ՝ ուղեկցվելով ինֆորմացիոն պատերազմով ու ապատեղեկատվության արշավներով:

---

[9] Փաստերը հաստատում են. Ադրբեջանն Արցախում արգելված սպիտակ ֆոսֆոր է օգտագործել, 13, 11, 2020, Փաստերի ստուգման հարթակ, https://fip.am/13682

[10] Սիրիայից՝ Հարավային Կովկաս. Թուրքիան վարձկաններին տեղափոխեց նոր պատերազմական գոտի, 05.11.2020, Media.am https://media.am/hy/verified/2020/11/05/24940/

[11] Փաստերի ստուգումը պատերազմի օրերին. խոչընդոտներ և բաց աղբյուրներ, https://media.am/hy/crossroad/2020/12/23/25600/

[12] Մեկ ժամից «Էրեբունի» օդանավակայան վայրէջք կկատարի հայ ռազմագերիներին Բաքվից Երևան տեղափոխող հերթական ինքնաթիռը, https://freenews.am/post/2ad454259ba29c73cb75dbe3ef1fc623

[13] Գերիների հարցը շահարկվում է վրդովմունքը խորացնելու, ընտրական վիճակի վրա ազդելու համար. Ալեն Սիմոնյան, https://www.youtube.com/watch?v=83ToT0XPyAY&t=27s

[14] Ապրիլի 1-15-ի կեղծ ու հերքված լուրերը, 19.04.2021, https://media.am/hy/verified/2021/04/19/27342/

[15] «Դատարկ օդանավ և տեղեկատվական շփոթ. ռազմագերիների վերադարձի շուրջ», Սիվիլնեթ, 9.04.2021, https://tinyurl.com/mr3f79m2

Ռուսական մեդիան, որը գրեթե ամբողջությամբ վերահսկվում է Կրեմլից[16], զորքի ներխուժումը Ուկրաինա անվանում էր ոչ թե պատերազմ, այլ «հատուկ ռազմական գործողություն», հեռուստաալիքները թաքցնում էին ռուսական կողմի վայրագությունները, որոնք ապացուցվել էին միջազգային կառույցների կողմից բազմաթիվ փաստերով, և արդարացնում էին պատերազմը կեղծ պնդումներով, թե Ուկրաինայում իշխում են նեոնացիստներ, որոնք կեղեքում են ռուսալեզու և ռուսամետ բնակչությանը: Ուկրաինական կողմում աշխատում էին գրեթե բոլոր միջազգային լրատվամիջոցները, և ամբողջ աշխարհը հետևում էր պատերազմի լուսաբանմանը:

Մարիուպոլում ռմբակոծված ծննդատանից փախչող հղի կինը / Լուսանկարը՝ Associated Press-ի

Օրինակ՝ Մարիուպոլ քաղաքի ռմբակոծված հիվանդանոցի և վիրավորված հղի կնոջ լուսանկարները, որ տարածվեցին սոցցանցերում և միջազգային մամուլում, ռուսական աղբյուրները համարում էին բեմադրված, պնդում էին, որ կինը հղի չէ. որպես հիմնավորում բերվում էր այն հանգամանքը, որ աղջիկը բլոգեր է և ուրեմն որպես դերասան է լուսանկարվել: Կինն իրականում, հղի էր և ծննդաբերել է պայթյունից մի քանի օր անց[17]:

Ռուսական աղբյուրները օգտագործում էին ֆիլմերից, միջոցառումներից կադրեր ու լուսանկարներ՝ պնդելու, որ ուկրիանացիներն իրենք են բեմադրում մասսայական ջարդերն ու քաղաքացիական կառույցների ռմբակոծությունները, որ ոչ մի պատերազմ իրականում չկա[18]: Օրինակ՝ պնդում էին, որ Բուչա քաղաքում տեղի ունեցած սարսափելի ոճրագործությունների մասին լուրերը և քաղաքում հազարավոր դիակների լուսանկարները կեղծ են: Իրականում, Բուչայում մարդկանց սպանդը արձանագրվել էր նաև միջազգային արբանյակային լուսանկարներով և ապացուցվել, որ մահացած մարդկանց մարմինները նկարներում հայտնվել են հենց այն ընթացքում, երբ քաղաքը դեռ ռուսական վերահսկողության տակ էր[19]:

Ուկրաինայի պատերազմը Հայաստանի դեմ փորձեց օգտագործել Ադրբեջանը՝ երկու հակամարտությունների միջև հավասարության նշան դնելով, Հայաստանը ներկայացնելով որպես ագրեսոր՝ Ռուսաստանի պես, որն օկուպացրել է զոհի՝ Ադրբեջանի տարածքը: Ադրբեջանական աղբյուրները տարածեցին նաև կեղծիքներ, իբրև Հայաստանն աջակցում է Ռուսաստանին Ուկրաինայի դեմ պատերազմում, և, օրինակ, ռուսներին է տվել Սու-30ՍՄ կործանիչները: Այս սուտը հերքեց

[16] Freedom in the World: Russia, 2020, Freedom House, https://freedomhouse.org/country/russia/freedom-world/2022

[17] Չկա որևէ ապացույց, որ հղի կնոջ լուսանկարը բեմադրված է, 03.11.2022, Media.am https://media.am/hy/verified/2022/03/11/32020/

[18] Ukraine invasion: False claims the war is a hoax go viral, 08.02.2022, https://www.bbc.com/news/60589965

[19] Բուչան «բեմադրված էր», Վիննիցան անտեսվեց. ի՞նչպես է հայկական Տելեգրամը լուսաբանում ռուս-ուկրաինական պատերազմը, 02.09.2022, https://media.am/hy/verified/2022/09/02/33896/

Պաշտպանության նախարարությունը՝ ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի անդամ պետությունների ռազմական կցորդներին հրավիրելով զորամաս և ցույց տալով կործանիչները[20]։

Չշփոթվել արագ զարգացող իրադարձությունների մեջ

Պատերազմի, ճգնաժամի ընթացքում իրադարձություններն արագ են զարգանում, ու շատ հաճախ լրագրողները դրանց անմիջական մասնակիցը չեն։ Պատերազմի թեժ կետերից հաղորդումներ են փոխանցում պետական ու ռազմական աղբյուրները, ականատեսները, և լրագրողը պիտի կարողանա ճիշտ կողմնորոշվել, հասցնի ստուգել ու ներկայացնել իրականությունը հնարավորինս փաստարկված և ստույգ՝ պահպանելով էթիկայի կանոնները։

2022թ. նոյեմբերի 17-ին Associated Press-ի լուրը, թե ռուսական հրթիռները ներխուժել են ՆԱՏՕ-ի անդամ երկիր Լեհաստանի տարածք և սպանել երկու քաղաքացու, ցնցեց աշխարհը։ Ուկրաինացիները շտապեցին հաստատել այդ լուրը, շատերը սկսեցին կանխատեսումներ անել Երրորդ համաշխարհային պատերազմի մասին, իսկ ամերիկյան պաշտոնական աղբյուրներն սկսեցին ավելի զգուշավոր ձևակերպումներ անել՝ ասելով, որ հրթիռները ռուսական արտադրության են, բայց հնարավոր է՝ արձակվել են ուկրաինական կողմից։ Մեկ օր անց, Associated Press-ը հաղորդագրությունը հեռացրեց և ուղղում տպագրեց։ Հետաքննությունը հաստատեց, որ հրթիռները սխալմամբ ուղարկել էր Ուկրաինան, ոչ Ռուսաստանը[21]։

Շտապ ու չճշտված տեղեկությունը կամաց-կամաց լրացվեց պաշտոնական ու ստուգված տեղեկություններով և, ի վերջո, լրատվամիջոցն ընդունեց իր սխալն ու ուղղեց։

Երբ լրագրողն ունի շատ կարևոր, սենսացիոն տեղեկություն, դժվար է սպասել ու չհայտնել այն, թեև մասնագիտական էթիկայի ամենահայտնի կանոնն է՝ մինչև տարածելը ճշտել տեղեկությունն առնվազն երեք աղբյուրից։ Պետք է հիշել, որ լրագրողը մարդ է, որ կարող է սխալվել, իսկ պատերազմը դժվար, հաճախ անհասկանալի, արագ փոփոխվող իրողություն է, որի մասին պատմելիս կարող են լինել թյուրիմացություններ ու վրիպումներ։

Ապատեղեկատվությունը ճանաչելու և ստուգելու քայլեր

Ապատեղեկատվությունը, մանիպուլյացիան ճանաչելու, տարբերելու և դրանից խուսափելու համար կարևոր է չտրվել զգացմունքներին ու պահպանել մեդիագրագիտության կանոնները։ Ապատեղեկատվությունը, հատկապես պատերազմական իրավիճակում, շատ ազդեցիկ ու զգացմունքային է լինում՝ վախեցնող, սպառնացող, հուսադրող, հուզիչ… Առանց հույզերի, սթափ վերլուծելով ցանկացած կասկածելի տեղեկատվություն՝ անհրաժեշտ է մտքում ունենալ մեդիագրագիտության հինգ հարցերը.

[20] Ղրիմը Ղարաբաղ չէ. ինչպես է քարոզչությունը նույնականացնում երկու տարբեր հակամարտությունները, https://media.am/hy/verified/2022/12/28/34904/
[21] How an anonymous source raised false alarm of Russian strike on Poland, https://www.washingtonpost.com/media/2022/11/17/russian-missile-poland-correction/

Ո՞վ է հեղինակը/աղբյուրը,

Ո՞րն է հիմնական ասելիքը,

Ու՞մ է ուղղված,

Ի՞նչ հնարքներ են կիրառված,

Ի՞նչ նպատակ ունի նյութը:

Ամենակարևորը՝ տեղեկատվության սկզբնաղբյուրը գտնելն ու գնահատելն է, թե որքանով է այդ հարթակը, մարդը, աղբյուրը արժանահավատ: Նաև համոզվել, որ ասելիքը հիմնավորված է փաստերով ու ապացույցներով: Տեղեկությունների ստուգման հիմնական կանոններն ու մեթոդները ներկայացված են «Մեդիագրագետ քաղաքացու ուղեցույցում»:[22]

Մի քանի խորհուրդ՝ պատերազմի ընթացքում տեղեկատվական հոսքերում կողմնորոշվելու համար

1 Հետևեք փորձված, վստահելի աղբյուրների: Առանձնացրեք մի քանի լրատվամիջոց, փորձագետ, աղբյուր, որոնք ձեր կարծիքով չեն խաղում լսարանի զգացմունքների հետ, խոսում են փաստերով, ազնիվ են և կշռադատված, եթե սխալվում են՝ ընդունում ու ուղղում են սխալը, և փորձեք նրանց միջոցով հետևել իրադարձություններին:

2 Տարբերեք քարոզչությունը: Պատերազմը նաև ինֆորմացիոն դաշտում է, այստեղ էլ են գրոհում, փորձում ազդել մյուս կողմի վրա, պաշտպանվել, ոգևորել... Հիշեք, որ պատերազմում երկու կողմի պաշտոնական տեղեկությունները քարոզչություն են պարունակում. քննադատաբար վերաբերվեք դրանց:

3 Ճանաչեք հակառակորդի կողմից տարածվող տեղեկությունները: Դրանք կարող են լինել հայերեն, բայց հաճախ գրված են սխալներով, կարող են ստեղծվել հայկական լրատվամիջոցներին և հայ օգտատերերին նմանակող էջեր, որոնք կարելի է բացահայտել հասցեն (url), էջի մասին տեղեկությունները, հետևորդների և ընկերների ցանկերը ուսումնասիրելով...

4 Ստուգեք կասկածելի տեղեկությունները: Փորձեք գտնել դրանք այլ, վստահելի աղբյուրներում, պարզեք սկզբնաղբյուրը, ուշադրություն դարձրեք հրապարակման ամսաթվին, տարածվող լուսանկարի ու տեսանյութի մանրամասներին, որ կօգնեն հասկանալ՝ կեղծիք է, թե իրական:

[22] Մեդիագրագետ քաղաքացու ուղեցույց, 2022, ՄՆԿ, ԱԳՆ, https://media.am/hy/lab/2022/05/02/32646/

5 Հետևեք զգացմունքներին։ Ապատեղեկությունը ամենից հաճախ խաղում է մարդկանց զգացմունքների հետ՝ վախեցնում ու սարսափեցնում է, խուճապի մատնում, կամ հակառակը՝ անհավանական լավ լուրով երջանկացնում... Կարևոր է սեփական զգացմունքները կառավարելն ու սթափ մտածելը։ Արժե նաև հիշել ուրիշների զգացմունքների մասին՝ որևէ բան կարդալիս ու տարածելիս։ Ականատեսը կարող է լինել շփոթված, այլալված, նրա վկայություններին նույնպես պետք է քննադատորեն վերաբերվել։ Եթե տեղեկություն տարածողը դուք եք, մտածեք ձեր ընկերների զգացմունքների մասին, թե ինչ ազդեցություն կունենա գրառումը նրանց վրա։

6 Առանձնահատուկ ուշադրություն դարձրեք երեխաներին ու այլ խոցելի խմբերին. որևէ տեղեկություն վերապատմելիս, տարածելիս՝ հիշենք, որ դա կարող են տեսնել, կարդալ, լսել երեխաներ, կամ մարդիկ, որ անմիջականորեն տուժել են պատերազմից և շատ զգայուն են այդ թեմայի նկատմամբ։

7 Հոգ տարեք ձեր հոգեկան առողջության մասին. պատերազմական լրահոսը դաժան է, ազդեցիկ, լցված նաև բռնության ու արյան տեսարաններով։ Կարևոր է երբեմն կտրվել լրահոսից, անջատել գործիքները, շփվել սիրելի մարդկանց հետ, ձեռնարկել օգտակար ու հետաքրքիր գործեր։



Արյուն, ավեր, արցունքներ. մեդիայի խթանիչներն ու ցավազրկողները

Արմեն Սարգսյան
մեդիա մասնագետ

1877թ. Բայազետի պաշարումն ու հայերի կոտորածները «Խենթը» վիպակում նկարագրելիս հայ գրող Ռաֆֆին մի դրվագ[23] է պատմում։ Երբ 5 զոհերի գնով բերդաքաղաք են հասցնում մի քանի լիտր ջուր և օղու բաժակով տալիս ամենաթույլերին, մթության մեջ մեկը նկատում է, որ ջուրը կարմիր է։

- Խմի՛ր, խմի՛ր, հիմա քրդերը ջուրն այսպես ներկած են տալիս մեզ։ Դուք տեսնեիք քանի դիակներ էին ընկած աղբյուրի մեջ…

Մարդիկ սոսկում են, բայց խմում են պղտոր կարմրագույն հեղուկը, որի մեջ «լուծված են մարդկային մարմիններ»։ Մեկն էլ նույնիսկ սրախոսում է՝ «այդպես լավ է, ջուրը կպարարտանա և ավելի ուժ կտա»։

Մի քանի տողով, պարզ ու պատկերավոր՝ Ռաֆֆին ներկայացնում է անհույս իրավիճակը, սարսափն ու արյունը։ Բառերո՛վ։ Հիմա հարց. եթե դա հնարավոր լիներ՝ ինչպե՞ս կվարվեին Բայազետի պաշարումը լուսաբանող լրագրողները, արդյո՞ք ցույց կտային «ջրում լուծված» մարդկային մարմինները, արյունով «ներկած» ջուր խմող պաշարվածներին, կհեռարձակեի՞ն նրանց դաժան կատակները։ Եթե այո՝ լսարանը ծանր ապրումներ կունենար։ Եթե ոչ՝ ինչպե՞ս կհաղորդեին պաշարման իրական ողբերգությունը։

Աչքից հեռու՝ սրտից հեռու. «անմարդկային» պատմությունները և՛ մարդու համար են

Մահը, արյունը, ավերածությունը, դաժանությունը առաջացնում են ցնցումներ և հակասական զգացմունքներ՝ վրեժ, սարսափ, թուլություն, անկումային տրամադրություն և այլն։ Դրանք զգայացունց տեսարաններ են և արդի մեդիայում հայտնի են graphic image անունով, որովհետև ընդգծված (գրաֆիկական) մանրամասներ են պարունակում։

Թվիթեր սոցալական ցանցի հրապարակումների քաղաքականությունն այսպիսի բնորոշում է տալիս զգայացունց տեսարաններին.

Մահ, բռնություն, բժշկական գործողություններ, ֆիզիկական ծանր վնասվածքներ պարունակող պատկերներ։ Բացառություն է կազմում վավերագրական կամ կրթական բովանդակությունը։

Այս սահմանափակումները, սակայն, հստակություն չեն մտցնում։ Հակառակը՝ ավելի են ընդլայնում ու մշուշապատում օրինակների ցանկը։ Եթե Twitter-ում օգտագործենք #killing կամ #shooting հեշթեգը, ապա կտեսնենք բռնությունների ու սպանությունների մի այնպիսի շարան, որը շատ հեռու է կրթական բովանդակությունից։

[23] Ռաֆֆի, Խենթը, Սովետական գրող, 1978թ., էջ 12

Մի պահ մոռանանք համամարդկային ողբերգություններն ու մարդկության պատմության սև էջերը: Դիտենք սիրված շեֆ-խոհարար, աշխարհահռչակ շոումեն Գորդոն Ռամսիի հաղորդումները. ինչպե՞ս է նա կենդանի ծովախեցգետինը դանակով մասերի բաժանում, կամ համբուրում ութոտնուկին ու գցում եռացող ջրի մեջ: Այս մարդը Բրիտանական կայսրության ասպետ է, ունի 17 խոհարարական օսկար՝ Միշլենի աստղ:



Նկարը՝ Գորդոն Ռամսիի Յուտյուբի էջ

Մարդու կյանքը լայնորեն լուսաբանվում է մեդիայում. բնական աղետներից մինչև պատերազմներ, ավտովթարներից մինչև մարզական մենամարտեր: Ավելին, ուղիղ եթերում տեղի են ունենում անկանխատեսելի դեպքեր ու արարքներ. սպանություններ, ինքնավնասումներ, պայթյուններ: Լրագրողների աշխատանքն ու պարտականությունն է դրանք ներկայացնելը: Սակայն ցանկացած լուր հաղորդելիս «որտեղ»-ից ու «երբ»-ից բացի կա նաև գլխավոր՝ «ինչպես» հարցը: Լրագրողները պետք է մտածեն նաև ինչպե՞ս մատուցել զգայացունց տեսարանները:

Աչքը գնում է տեսնի, թե ականջն ինչ է լսել. վավերագրությունը կարևոր է

Զգայացունց տեսարանները լսարանին են հասնում ոչ միայն լրատվամիջոցների օգնությամբ: Մարդ-մեդիա թվային դարաշրջանում տեղեկություններ կարող է տարածել ամեն ոք: Շատ դեպքերում լրագրողները սոսկ միջնորդ են և փոխանցում են ականատեսների վկայություններ, տեսանյութեր ու պատկերներ: Լրատվամիջոցը գործ ունի աղբյուրի հետ և պետք է որոշի՝ հրապարակե՞լ զգայացունց տեսարանը, թե՝ ոչ:

Կան դեպքեր, երբ այդ հարցը պարզապես ձևականություն է, որովհետև տեսարանն արդեն լայնորեն շրջանառվում է սոցիալական ցանցերում, հավաքում դիտումներ, պատճառ դառնում քննարկումների ու վեճերի: Այստեղ արդեն գործի են անցնում խմբագրությունները, ճշտում փաստերը, ներկայացնում իրողությունը:

2020 թվականի հոկտեմբերի 15-ին ադրբեջանական սոցցանցերում լայնորեն տարածվեց մի խումբ ադրբեջանցի զինվորների կողմից Հադրութում կատարված սպանության դաժան տեսարանը։ Տեսանյութերում ադրբեջանցիները ծաղրում, ապա ուղիղ նշանառությամբ գնդակահարում են երկու արցախցիների, որոնց կապկպել էին և փաթաթել Արցախի դրոշով։ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունն այն «բեմադրություն» էր որակել։

Հետազոտողների, լրագրողների և իրավապաշտպանների միջազգային Bellingcat կայքը վերլուծեց[24] Հադրութի սպանության տեսարանները և պարզեց բոլոր մանրամասները՝ արևի դիրքից մինչև զինվորական համազգեստ։ Եթե չլինեին այդ դրվագները, հնարավոր չէր լինի փորձագիտական մակարդակով ապացուցել իրողությունը։

Սա զգայացունց տեսարանների օգտին խոսող առաջին և գլխավոր փաստարկն է։ Ինչքան էլ ցավալի ու սարսռեցուցիչ լինեն մանրամասները, միևնույն է, հանրությունը պետք է իմանա դրանց մասին։ 2021թ. սեպտեմբերին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հրապարակեց արտահերթ զեկույց[25]՝ գերեվարված հայ քաղաքացիական անձանց ու զինվորականների խոշտանգումների և սպանությունների մասին։ Լուսանկարներն ու տեսանյութերը, որպես իրեղեն ապացույցներ, կցված են զեկույցին։ Սոցցանցերից ստացված տեղեկություններով Պաշտպանի գրասենյակը նույնականացրել է ոչ միայն զոհերին, այլև նրանց խոշտանգողներին ու սպանողներին։ Այսպիսով, Տելեգրամի օգտատիրոջ հրապարակումը, մեդիայի ու փորձագիտական աշխատանքի շնորհիվ դառնում է պատմական փաստ։

Ի վերջո, ականատեսներն են պատմությունը հասցնում մեզ՝ նույնիսկ եթե չեն ցանկանում։ Ռուս-ուկրաինական պատերազմի ժամանակ, երկու կողմերը տարածում են ականատեսների վկայություններ, տեսանյութեր ու լուսանկարներ։ Ուկրաինական Բուչայի սահմռկեցուցիչ կադրերը[26] միջազգային լրատվամիջոցների օրակարգում մշտական տեղ ունեն, իսկ ռուսական Իզվեստիան, «Հատուկ գործողություն Ուկրաինայում» խորագրով է ներկայացնում ավերածություններն ու զոհերը՝ առանց «պատերազմ» բառն օգտագործելու։

Աչքը տեսածից է վախենում. մասնագիտական որոշումներ

Նյարդաբանության աշխարհահռչակ պրոֆեսոր Ռիչարդ Նեսթաքը «The American Scholar» հեղինակավոր ամսագրում գրում է, որ ռուս-ուկրաինական պատերազմի *«լուսանկարներն ու տեսանյութերը, որոնք շուրջօրյա շրջանառվում են և ազատորեն հասանելի են բոլորին[27]»*, հնարավոր է առաջացնեն անուղղակի հետտրավմատիկ սթրեսային խանգարում (Proxy PDST)։ Մարդը կարող է սթրեսային խանգարման մեջ ընկնել ոչ թե իր հետ ուղղակի կատարվածից, այլ ուրիշների անպաշտպանության զգացումից։

Իսկապես, ինչ զգացողություն կունենա մարդը, եթե հանդիպի Սուսաննա

[24] An Execution in Hadrut, https://www.bellingcat.com/news/rest-of-world/2020/10/15/an-execution-in-hadrut-karabakh/

[25] ՄԻՊ զեկույց, սեպտեմբեր 2021, https://www.ombuds.am/images/files/5c7485fdc225adfd8a35d583830dcd17.pdf

[26] The New York Times-ի թվիթերյան գրառումը https://twitter.com/nytimes/status/1605963160334245888

[27] WARNING: GRAPHIC IMAGES, Footage from a war and the effects on your brain, Richard Restak

Մարգարյանի կամ Անուշ Ապետյանի խոշտանգման նկարագրությանը: 2022թ. սեպտեմբերի 12-13-ին Հայաստանի վրա Ադրբեջանի հարձակումից հետո Տելեգրամ ալիքներում տարածվեցին հայ զինվորների, այդ թվում՝ կանանց, խոշտանգման ու անարգման նոր տեսանյութեր: Քաջալերանքի կոչերով ու մեկնաբանություններով ուղեկցվող այդ պատկերներում երևում էին կտրված մատներ ու ոտքեր, մարմնի վրա դանակներով փորված գրություններ, որոնք հատուկ արվել էին տեսանկարահանման համար:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում[28] տեղ են գտել փաստեր ու ապացույցներ, որոնցով հղումներ են կատարվել մարդու իրավունքներին առնչվող միջազգային հռչակագրերին ու պայմանագրերին:

Ինչպե՞ս վարվեն լրագրողներն այս զեկույցը լուսաբանելիս: Արդյո՞ք պետք է «ցավազրկեն» լսարանը: Առաջին պատասխանն ու լուծումն այս դեպքում խմբագրության զգուշացումն է.

Նկարը՝ Վիքիմեդիայի

«Նյութը պարունակում է զգայացույց տեսարաններ, թույլ նյարդեր ունեցողներին խորհուրդ չի տրվում դիտել» և այլն:

Այս ծանուցումը, սակայն, միակ տարբերակը չէ: Համացանցում լրատվամիջոցները «քայլ անելու» ևս մի հնարավորություն են տալիս իրենց լսարանին: Պատկերների փոխարեն սկսել է ավելի հաճախ հայտնվել աչքի վրա շեղ գծով նշան-զգուշացումը՝ Content Warning-ը: Օգտատերն ինքն է որոշում սեղմել ու դիտել բովանդակությունը: «Վատամարդ» դառնալու մեղադրանքը միանգամից հանվում է լրատվամիջոցի վրայից, բայց նաև չմոռանանք, որ լրագրողներն իրենց օգուտը լավ գիտեն՝ արգելված պտուղը քաղցր է:

Աչքի վերև ունք կա. ընկալումները կարող են փոխվել ըստ իրավիճակի ու ժամանակի

2014 թվականին Չիկագոյում ոստիկանը սպանեց 17-ամյա Լաքուան Մակդոնալդին: Սպանության տեսանյութը[29] հենց ոստիկանությունն էր տրամադրել լրատվամիջոցներին՝ ապացուցելու համար, որ Մակդոնալդի ձեռքին դանակ կար: Լրատվամիջոցները այնքան հաճախ ցուցադրեցին այն, որ բորբոքեցին հանրության կրքերը, եղան հուզումներ: «Դեյլի Բիսթ» պարբերականը մահվան այդ տեսարանից նույնիսկ կարճ շարժանկար՝ GIF էր պատրաստել ու լայնորեն շրջանառում էր Թվիթերում: Այս դեպքում զգայացունց դրվագը խթանիչի դեր ունեցավ, հույզեր ու ընդհարումներ առաջ բերեց:

Զգայացունց տեսարանները օգնում են մարդկանց գնահատել ու դատողություններ անել, պատկերացում կազմել թեմայի մասին: Եթե պատկերը մատուցվում է

[28] Արտահերթ հրապարակային զեկույց ՀՀ-ի վրա ադրբեջանական զինված հարձակման վերաբերյալ, https://www.ombuds.am/images/files/88015d8ec9e48d869bd8b706233613dd.pdf
[29] Newsrooms make varying calls about airing McDonald shooting video, https://money.cnn.com/2015/11/24/media/laquan-mcdonald-shooting-video-newsroom-decisions/index.html

անհարկի պաթոսով ու լրացուցիչ արտահայտչամիջոցներով (երաժշտություն, ուղեկցող կոչեր), ապա լսարանն այլ վարքագիծ կդրսևորի։ Հակառակը ևս ճիշտ է. այդ տեսարանները ծածկելը, կտրելը, փոխելը կորցնում են իրականությանը կապող թելը։ Ավելին, այս դեպքում լրատվամիջոցը կարող է թյուրընկալում սերմանել՝ մեղմելով, նույնիսկ արժեզրկելով կորուստներն ու վնասները։

2010թ. TIME ամսագիրը հրապարակեց Աիշա Մոհամադզայի լուսանկարն առաջին էջում։ Աֆղան այս աղջիկը 14 տարեկանում՝ բռնի ամուսնությունից հետո, ենթարկվել էր կտտանքների և փախել։ Ամուսնու ընտանիքը գտել էր նրան, կտրել քիթն ու ականջները և թողել լեռներում՝ արնաքամվելու։ Աիշային հաջողվել էր փախչել։ Հազարավոր պատմություններից մեկը, որ կարելի է լսել Աֆղանստանում։ Բայց այս մեկն առանձնահատուկ էր հենց լուսանկարի պատճառով։ 18-ամյա Աիշան՝ կտրված քթով դարձավ ընտանեկան բռնության դեմ պայքարի խորհրդանիշ։

TIME ամսագրին մեղադրեցին երիտասարդ կնոջ խոշտանգված լուսանկարն առաջին էջում դնելու համար։ Ավելին, կարծիքներ հնչեցին, թե խմբագրությունն այս նկարը տարածելով փորձում է ազդել հանրության վրա՝ արդարացնելով ԱՄՆ զորքերի ներկայությունը Աֆղանստանում։ Լուսանկարը մակագրված էր այսպես. «Աֆղան կինը և Թալիբանի վերադարձը»։ Այդ ընթացքում պլաստիկ վիրաբուժության Grossman Burn կենտրոնը հատուկ Աիշայի համար քիթ պատրաստեց և նրա նոր նկարները նոր ալիք բարձրացրին մեդիայում։ TIME-ի խմբագրական որոշումը՝ հրապարակել Աիշայի նկարը, մեծ ազդեցություն ունեցավ Աֆղանստանում և ամբողջ աշխարհում կանանց իրավունքների պաշտպանության գործում։

Ամերիկայի ու դաշնակից զորքերի քաղաքականությունը և կանանց իրավունքների քաղաքացիական շարժումները մեդիա տարածությունում հանդիպեցին մեկ կետում՝ TIME-ի շապիկին. ճիշտ ժամանակին՝ ճիշտ տեղում։ Խոշտանգված Աիշայի պատկերը հակակշռվեց վիրահատությունից հետո նրա ժպտացող լուսանկարով։ Եթե մենք արդեն գիտենք այս պատմությունը, TIME-ի խմբագրության որոշումն այնքան էլ հակասական չի թվում։

Աիշայի լուսանկարը Time ամսագրի շապիկին

Աիշայի լուսանկարը՝ պլաստիկ վիրահատությունից հետո
Նկարը՝ Grossman Burn կենտրոնի

2006թ. հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Արթուր Աբրահամը էդիսոն Միրանդայի հետ մենամարտի չորրորդ ռաունդում ուժգին հարված ստացավ ծնոտին: Դուրս ընկած ծնոտով, ակնհայտորեն տանջվելով ցավից, նա, այնուամենայնիվ, հաղթեց: Արթուրը չէր կարողանում խոսել և արյունաշաղախ սրբիչով անընդհատ մաքրում էր դեմքը: Բայց Հայաստանը ցնծում էր:



Արթուր Աբրահամը հաղթում է մենամարտը դուրս ընկած ծնոտով / Նկարը՝ Spiritofmusicx Յություբի ալիքից

Աշխարհով մեկ ուղիղ հեռարձակվող մարտի այս տեսարանը, որը մղձավանջի էր նման, մարզական մեդիայի հիթն էր: Այն կամքի, համառության ու վարպետության օրինակ էր, որից ոգեշնչվեցին միլիոնավոր մարզիկներ: Արթուրի աղճատված դեմքը հաղթելուց հետո ոչ թե խղճահարություն էր հարուցում, այլ՝ հպարտություն ներշնչում: Ուղիղ եթերում այդ հույզերը հակասական էին:

Ուղիղ հեռարձակումը լսարանին տալիս է անմիջական ներկայության զգացողություն: Խմբագրությունը, դեպքի վայրում գտնվող լրագրողը պետք է արագ որոշում կայացնեն՝ ցուցադրե՞լ հանրահավաքի ժամանակ ինքնահրկիզվող մարդուն, թե՞ ոչ: Ի՞նչ ազդեցություն կթողնի այն իրական ժամանակում ցույց տալու դեպքում: Վավերագրել իհարկե պետք է, բայց տարածելու համար պետք է կշռադատված մասնագիտական մոտեցում: Վտանգավոր վայրէջքի ժամանակ օդաչուն գերադասում է երկրորդ շրջանը կատարել, նույնիսկ եթե արժանանում է շտապող ուղևորների փնթփնթոցին ու կշտամբանքին:

Ավելի լավ է աչքը դուրս գա, քան՝ անունը. մասնագիտական անտարբերության մասին

Ամեն օր վիրահատություններ կատարող բժկի համար արյուն, նույնիսկ՝ մահ տեսնելը մասնագիտության անբաժան մասն է: Ճգնաժամեր, հակամարտություններ լուսաբանող լրագրողներն առնչվում են բազմաթիվ հուզական դրվագների: Մասնագիտությունն ու մարդկային պարտքը կարող են խաչվել և երկընտրանքի առաջ կանգնեցնել լրագրողին:

2017թ. Սիրիական պատերազմի ժամանակ լուսանկարիչ Աբդ Ալքադեր Հաբաքը

վավերագրում էր խաղաղ բնակչության տարհանումը, երբ ռմբակոծության թիրախում հայտնվեցին կանանցով և երեխաներով լցված ավտոբուսները։ Արտահայտիչ, զգայացունց պատկերներ ստանալու փոխարեն Հաբաքը գերադասեց մի կողմ դնել տեսախցիկն ու նետվել մարդկանց օգնության։

Լուսանկարիչ Աբդ Ալքադեր Հաբաքը Սիրիայում /Նկարը՝ NBC News-ի

Սիրիական վեցամյա հակամարտության ընթացքում լրագրողները համաշխարհային մեդիան բառացիորեն ողողել են զգայացունց պատկերներով։ Դրանցից մեկն էլ դարձավ այն լուսանկարը, որում Հաբաքը՝ լուսանկարիչը, ողբում է ռմբակոծության զոհի մոտ ծնկած։

Լուսանկարիչ Աբդ Ալքադեր Հաբաքը Սիրիայում /Նկարը՝ NBC News-ի

Մասնագիտության մասին «մոռանալով» Հաբաքը մարդկային կյանք փրկեց. տեսնելով, որ մի երեխա զոհվել է, իսկ մյուսը դեռ կենդանի է, գրկեց ու հեռացրեց նրան կրակի գծից։

Հիմա հարց. ինչպե՞ս աշխարհում հայտնի դարձան այս լուսանկարները։ Նշանակում է, եղել է մեկ ուրիշը, որը վավերագրել է իր գործընկերոջ արարքը։ Այդ լուսանկարչի անունն ավելի քիչ է հայտնի, քան՝ Հաբաքինը։ Նա 21-ամյա Մոհամմադ Ալրագեբն է։

Մարդկությանը հուզած ու մտահոգած լուսանկարները և դրվագները նախապատմություն ունեն։ Այսինքն՝ հոգեցունց պատկերներն իրենց հերթին ունեն նաև զգայուն մանրամասներ։ Երբ դրանք հայտնի են դառնում, իրերի դրվածքը կարող է գլխիվայր շուռ գալ, նունիսկ՝ պատճառ դառնալ նոր ողբերգությունների։

1994թ. ֆոտոլրագրող Քենին Քարթերը Պուլիտցերյան մրցանակ ստացավ Սուդանում սովահարությունը պատկերող լուսանկարի համար։ Առաջին անգամ լուսանկարը հրապարակվեց The New York Times-ում և ցնցեց ամբողջ աշխարհը։ Սովալլուկ երեխայի կողքին սպասող գիշատիչ թռչունի պատկերը խղճահարության, սարսափի և էլի շատ զգացմունքների հրաբուխ առաջացրեց։

Քենին Քարթերի՝ Պուլիտցերյան մրցանակի արժանացած լուսանկարը / Նկարը՝ The New York Times-ի

Լրագրության օսկարը՝ Պուլիտցերյան մրցանակը, ստանալուց հետո Քարթերին հարցրին, թե ի՞նչ արեց նա այդ տեսարանը լուսանկարելուց հետո։ Քարթերը պատասխանեց.

«Մի ծխախոտ վառեցի, զրուցեցի Աստծո հետ ու լաց եղա»։

Աշխատանքն ավարտելուց անմիջապես հետո Քարթերը միացել էր զինվորականների մի խմբի, որոնք մեքենայով նրան պետք է հասցնեին ՄԱԿ-ի կայաններից մեկը։ Սովահար երեխայի հետագա ճակատագրի մասին նա ոչինչ չգիտեր։ Եվ հանրությունը, դուրս գալով լուսանկարի ցնցումից ու նրա պարգևատրման արարողության ազդեցությունից, հարցրեց տարբեր լեզուներով. սովահար երեխային օգնելու փոխարեն ինչո՞ւ է բավարարվել միայն նրան լուսանկարելով։

Իսկ St Petersburg Times պարբերականն ավելի հեռու գնաց և մեղադրեց նրան, ասելով, թե՝ ողբերգության տեսարանում իր տեսախցիկի համար «հարմար կադր փնտրողը չի տարբերվում մեկ այլ գիշատչից, որն արդեն կադրում կա»[30]։

Քարթերին պաշտպանեցին ու արդարացրին նրա ընկերներն ու հարազատները, շատ լրագրողներ։ Մինչ այդ Պուլիտցերյան մրցանակակիր ֆոտոլրագրողը շատ թեժ կետերում կյանքը վտանգելով աշխատել էր ու դեպքի վայրից բացահայտումներ արել։ Բայց նրա աստեղային լուսանկարը պատճառ դարձավ ինքնասպանության։ Ամփոփվելով ինքն իր մեջ, լուսանկարն անելուց մեկ տարի անց՝ 1994-ին, Քարթերը դիմեց այդ ծայրահեղ քայլին։

Թեժ կետերում, մահվան ու վտանգների մեջ լրագրության էթիկայի կանոններն ու այլ ցուցումները միշտ չէ, որ լուծում են մասնագիտական վարքի թնջուկները։ Օրինակ՝ հետտրավմատիկ սթրեսային խանգարում ստանում են ոչ միայն բռնության, խոշտանգման ենթարկվածները, այլև՝ ականատեսները։ Իսկ դեպքի վայրում աշխատող լրագրողներն ականատեսներ են։ Նրանց որոշումներն ու քայլերն էլ բխում են այն նույն զգացմունքներից, որոնք մենք ենք ապրում՝ նրանց աշխատանքի արդյունքները դիտելիս։

Մեդիա սպառողներն արդարացիորեն համարում են, թե իրենք բավականաչափ ունակ են որոշելու, թե ինչ է իրենց անհրաժեշտ։ Դա նշանակում է, որ հանրության պահանջներն ու լրագրության մասնագիտական կանոնները թեժ պայքարի մեջ են, քանի դեռ լրահոսում կան արյուն, ավերածություններ ու արցունքներ։

[30] AFTERIMAGE. The vulture in the frame, https://www.thehindubusinessline.com/blink/watch/the-vulture-in-the-frame/article9901741.ece

Խաղաղության խոսույթը Արցախյան առաջին և երկրորդ պատերազմների մեդիայում

Վահրամ Մարտիրոսյան
մեդիա հետազոտող

Ո՞վ պետք է նրանց պապանձեցնե սաստելով և մեզ սփոփե գովելով և չափ դնե խոսքի և լռության։ Մովսես Խորենացի

Խաղաղության խոսույթ. Արցախյան առաջին պատերազմ

Չեմ նկատել, որ հանրային գիտակցության մեջ բավարար չափով ամրակայված է, բայց Հայաստանը անկախացել է փաստացի պատերազմական իրավիճակում։

ՄԱԿ-ում ՀՀ դրոշը բարձրացվել է 1992-ի մարտի 2-ին։ Նույն օրերին կռիվներ էին Տավուշի Այգեպար, Իջևանի Կիրանց գյուղերի մատույցներում, որտեղից ինքնապաշտպանական փոքրաթիվ ջոկատները, տալով զոհեր ու վիրավորներ, դուրս էին մղում անհամեմատ լավ զինված ադրբեջանցիներին։ Կարծես սովորական է, որ լավ զինված էին։ Ինչո՞ւ։ 1992-ի մարտի 6-ին ՀՀ նախագահ Տեր-Պետրոսյանը հայտարարությամբ հանդես եկավ, որ ԱՊՀ զինապահեստները, որոնք սպասարկում էին Հարավային Կովկասի երեք հանրապետություններին, «առանց մեկ կրակոցի և առանց զինծառայողների կողմից որևէ դիմադրության» հանձնվել են Ադրբեջանին («Երկիր», 1992, #47)։ Թերթերի սովորական լուրերից էր, որ Մարաղա գյուղում թշնամին կոտորել է շուրջ հիսուն անօգնական հայերի, որ.... «ադրբեջանցիները մեծ ուժերով ետ գրավեցին Ստեփանակերտի Կրկժան թաղամասը»։ Ստեփանակերտի՛ թաղամասը։

Վերընթերցելով բանակցությունների սկսման նախապայմանները, որ նույն ամսին դրել էին ադրբեջանցիները, ես դեժավյու ունեցա մեր օրերի հետ (պատկերացնում եմ շոկը, որ կապրի երիտասարդ սերունդը)։ Դրանք էին՝ ազատել ադրբեջանական բոլոր գրաված տարածքները և չեղյալ հայտարարել մեր Գերագույն խորհրդի ընդունած որոշումը՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին։

Այս խորապատկերին էր, որ ընդհատումներով, բայց ծավալվում էր խաղաղության խոսույթը Հայաստանում 1990-ականներին։ 1992-ին՝ Արցախյան առաջին պատերազմի թեժացման տարին, խաղաղասիրական մասնավոր այցով Բաքու մեկնեց ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) վարչության անդամ Աշոտ Բլեյանը (նոյեմբերի 4-9-ը), ինչը դատապարտումների փոթորիկ առաջացրեց հայ հանրության մեջ։

Նրա ուղևորությունը գաղափարապես նախապատրաստել էր ՀՀ առաջին փոխվարչապետ Կտրիճ Սարդարյանը՝ «Եթե չսթափվենք այսօր՝ դարը կավարտենք այնպես, ինչպես սկսել ենք» ծավալուն վերնագրով ծավալուն հոդվածով, որը լույս էր տեսել շուրջ մեկ տարի առաջ (20.11.1991, «Հայք»)։

«Խնդրելով պնդում եմ գնալ Բաքու։ [....]Հսկայական, բայց ապարդյուն ջանքեր գործադրեցինք համաշխարհային դեմոկրատիային հասկացնելու, որ անտեսվում

է մարդու, ազգի իրավունքները։ […] Մենք հո սեփական փորձով գիտենք, որ այս տարածքներում չեն գործում միջազգային նորմեր։ […] Հասկացողը կհասկանա, որ Հայաստանի Հանրապետությունը Ղարաբաղի համար արեց հնարավոր և նույնիսկ անհնարին ամեն ինչ։ […] Ղարաբաղը հայտարարվեց հանրապետություն… Անմիջապես Ադրբեջանի հետ բանակցություններ սկսելու փոխարեն փորձեցինք գործը կարգավորել Ելցինի ու Նազարբաևի միջնորդությամբ։ […] Ղարաբաղի հարցում Մոսկվա տանող բոլոր ճանապարհները անցնում են Ադրբեջանով»։

Խաղաղության խոսույթ. Արցախյան երկրորդ պատերազմ

2020-ին փոխզիջումները մեր երկրում շատ ավելի դժվարընկալելի էին։ Առնվազն երկու հանգամանքի բերումով.

- արցախյան առաջին պատերազմում հայկական ուժերի հաղթանակի,
- այդ հաղթանակի շահարկման արդյունքում Ռ. Քոչարյանի ու Ս. Սարգսյանի նախագահության օրոք արմատավորված «տարածաշրջանի ամենամարտունակ բանակի» քարոզչական առասպելի։

Մեդիան ամբողջ պատերազմը լուսաբանեց «Հաղթելու ենք/հաղթում ենք» կարգախոսների ոգով, չփորձեց քննարկել փոխզիջումային տարբերակները, չարծարծեց խաղաղության խոսույթը, թեև քիչ թե շատ տեղյակ էր, որ ռազմաճակատում դրությունը անհուսալի է։ 2020-ի հոկտեմբերի 17-ին Փաշինյանը այդ մասին տեղեկացրել էր քաղաքական առաջատար կուսակցությունների ղեկավարներին, իսկ մեր մեդիայի գերակշիռ մասը երկար տարիներ գտնվել էր և գտնվում է նրանց (և նրանց ենթակա օլիգարխների) վերահսկողության ներքո։

Մեծ էին հանրության սպասելիքները մի քանի փորձառու լրագրողներից, որոնք պատերազմի կիզակետում էին, բայց վերահաս պարտության մասին աղոտ ակնարկներից այն կողմ չանցան՝ ավելի խճճելով ֆեյսբուքյան լսարանը։

«Էրդողանին ու Ալիևին բերելու ենք մեր հերոս տղերքի շիրիմների մոտ մատաղ անենք», «Ոչխարը չի կարող հաղթել մարդուն. ամերիկահայ գրող», «Ադրբեջանական մամուլն ահաբեկված է Արցախում Վահագն Չախալյանի գտնվելուց», «Մերոնք մարդ են մեջ գցում, որ դիրքեր հելնեն, իսկ ադրբեջանցու լամուկին ծեծելով են տանում ռազմաճակատ։ Հետո էլ ասում են՝ ոնց եք հաղթում… Հաղթանակի գաղտնիքը հավատն ու նվիրումն են…»։ Պոռոտախոսության այսպիսի մրցույթ էր մեդիայում։ Հղումները չեմ դրել՝ տեքստը չծանրաբեռնելու համար, բայց կարող եք գուգլել ըստ վերնագրերի և իմանալ, թե որ ԶԼՄ-ներին պետք չէ հետևել ճգնաժամային իրավիճակում։

Լրատվական դաշտում, սակայն, իրականությունից, քննարկումներից, խաղաղության խոսույթից ամենից ավելի հեռացնում էին ՊՆ ներկայացուցչի ասուլիսները, որոնցից ծնվում էին «Ադրբեջանական լքված դիակները դառնում են կենդանիների բաժին. նյարդերից թույլ անձանց խորհուրդ չի տրվում դիտել» ոճի նյութեր։ Մի՞թե Արծրուն Հովհաննիսյանին և քարոզչական քաղաքականությունը մշակողները չէին սարսափում, որ մարդիկ մի օր կանդրադառնան. եթե մենք նահանջում ենք, ապա այդ վտանգը առաջին հերթին մեր զինվորների աճյուններին է սպառնում։

Պատերազմի խոսույթ. Արցախյան առաջին պատերազմ

Հակառակ ԶԼՄ-ների անհամեմատելի սակավությանը, ռազմական գործողությունների մասին տեղեկատվությունը ավելի շատ էր ու հավաստի։ Պաշտոնական և անկախ լրատվամիջոցներից ակնթարթորեն հայտնի էին դառնում կորուստները՝ Շահումյանի, Գետաշենի, Մարտակերտի զգալի հատվածի։ Հաջողությունների մասին տեղեկությունները ավելի զուսպ էին՝ համարվում էր, որ միջազգային հանրությունը տուժածին է խղճալու, նրա կողմն է պահելու։

Մեր զինուժի վիճակը նույնպես ճիշտ էր նկարագրվում։ «Երկիր» օրաթերթում լույս տեսած «Արցախի արյունոտ գարունը» հոդվածը պատմում էր, որ, «հասնելով դիրքերին «Ռոյթերի» թղթակիցն անակնկալի է եկել»՝ տեսնելով մեր կամավորների հնամաշ համազգեստներն ու փշրված տերևներից փաթաթած ծխախոտները։ Այդ ժամանակ՝ 1992-ին ապրիլին, ՀՀ-ը չուներ կանոնավոր բանակ, կռվում էին կամավորները՝ իրենց հայթայթած հագուստով, սնունդով ու ծխախոտով։

Ես՝ ինքս, 1992-ի ամռանը, վերադառնալով Մարտակերտի դիրքերից, հոդված տպեցի ՀՀՇ «Հայք» շաբաթաթերթում՝ ենթավերնագրերից մեկով «ռազմական գաղտնիք» հայտնելով. դիրքերում մեր կամավորները թիվը շատ է զիջում ադրբեջանցիներին։ Դա սովորական հեռադիտակով տեսանելի էր հակառակորդին, բայց… ոչ Երևանին, հատկապես՝ պոռոտախոս շրջանակներին։

Օրերի տարբերությամբ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը հայտնի հեռուստաելույթով[31] Մարտակերտի ճակատում կռվելու կանչեց 500 մահապարտի («իրականում թշնամին նույն թշնամին է, որ մեր առաջ փախչում էր, և մենք էլ նույն մենք ենք…»)։ «Խաղաղության կուսակցությունը»՝ ՀՀՇ-ն էլ ստիպված էր կոչ անել. «ադրբեջանական հրոսակները շարունակում են առաջխաղացումը… Արցախի վիճակը դառնում է օրհասական» («Հայք», 09.09.92), հայրենի հողի համար կռվելու պատրաստ յուրաքանչյուր հայ քաջորդի, բոլոր արցախցիները պետք է մեկնեն «արցախյան մարտադաշտ»։

Միաժամանակ, ընդդիմության երկարատև հանրահավաքային պայքարից հետո, 1992-ի սեպտեմբերին ՀՀ Գերագույն խորհուրդը որոշեց, որ անվավեր է գործադիր իշխանության որևէ փաստաթուղթ, որը Արցախը կճանաչի Ադրբեջանի կազմում, ինչը ևս մեկ արգելք էր բանակցությունների ճանապարհին։

Մահապարտները մեծաթիվ զոհերի գնով կոտրեցին հակառակորդի հարձակման թափը, հետո հայկական ուժերը հաջողություններ ունեցան, որոնք շարունակվեցին ընդհուպ մինչև 1994-ի հրադադարը։

Իսկ կա՞ր արդյոք հրադադարի դեմ դժգոհություն ժամանակի մամուլում, թե երկրի նախագահը չի թողել մեր զորքը «չայ խմի Բաքվում»։ Ոչ։ 1994-ի մայիսի 11-ի հրադադարի դեմ դժգոհությունը հետսամուտ է՝ Տեր-Պետրոսյանը պատմաբան է, այս բառն էլ օգտագործում են ձեռագրագետները՝ բնորոշելով ուշ արտագրությունների ընթացքում մատյան ներմուծված տեքստերը։ Հրադադարին հաջորդող ամիսների մամուլում ես չեմ գտել Ադրբեջանին կապիտուլյացիա պարտադրելու որևէ պահանջ, դրանք ի հայտ են եկել շատ հետո։ Իսկ, այ, Բաքվում հեշտ չեն համակերպվել, խախտել են հրադադարը մի քանի անգամ, մինչև հանդարտվել են։

[31] Վազգեն Սարգսյանի ելույթը, 1992թ. https://www.facebook.com/107806814301000/videos/816045865596668/

Իհարկե, առաջին պատերազմը 4-5 տարի տևեց, և «ժամանակ կար», որ բանավեճեր ծագեին։ «Պատերազմի խոսույթն» ավելի հաճախ արտահայտվել է ծանր 1992-ին։ «Հարատև կռվի» կենսափիլիսոփայությունը». սա ՀՅԴ-ի «Երկիր» պաշտոնաթերթում լույս տեսած ծավալուն հոդվածի վերնագիրն է (22.04.1992)։ Այն հիշեցնում է Լև Տրոցկու «հարատև հեղափոխության» գաղափարը, որը նա ձևակերպել էր «Մեր հեղափոխությունը» գրքում (1905), բայց 1917-ի բոլշևիկյան հեղաշրջումից հետո աստիճանաբար մերժվեց իր իսկ կուսակիցների՝ Լենինի ու Ստալինի կողմից։

Ըստ հոդվածագիր Սեյրան Զաքարյանի, «միայն 19-րդ դարի վերջին հայ քաղաքական միտքը հասկացավ, որ ազգային նվիրական տեսլականների իրականացման, ազգի ընդարմացած գոյավիճակի հեղափոխության վճռորոշ գործոնը «հարատև կռիվն է», տևական ու անզիջում հեղափոխական գործունեությունը»։ Դատողությունը նա հիմնավորում էր զոհերի պակաս քանակությամբ՝ «Եթե թվաբանության վերածենք «հաշտվելու և չհաշտվելու» ժամանակ ունեցած կորուստները, ապա կտեսնենք, որ «հաշտվելու» ժամանակ ավելի շատ արյուն ենք կորցնում, քան ցանկացած գոյամարտի ընթացքում», բայց չէր բերում ո՛չ փաստեր, ո՛չ «թվաբանություն»։

Իսկ «Մարտնչող «խաղաղասիրությունը» առանց դիմակի» հոդվածում (13.11.1992, «Երկիր») թերթի մշտական հեղինակ, պրոֆեսոր Ռոլանդ Ավոյանը քննադատում էր ժողովրդին, որ բավականաչափ ռազմաշունչ չէ. «Հայ ժողովրդի մեծագույն դժբախտությունն այն է, որ երկար ժամանակ զրկված լինելով պետականությունից՝ վերածվել է տարբեր պետությունների թևի տակ ծվարած անմիաբան հավաքականության, հաճախ գաղթականին բնորոշ հոգեբանությամբ, Հայրենիքի ու պետության հանդեպ անտարբեր առուփախի ժողովրդի»։

Կա՞ր ընդգծված խաղաղության խոսույթ 1994-ի հրադադարից հետո։ Ոչ։ Այն արտահայտվեց… ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածում[32]… 1997-ին։ Հոդվածը լույս տեսավ նոյեմբերի 1-ին, 1998-ի փետրվարի 3-ին նա հրաժարական տվեց։

Պատերազմի խոսույթ. Արցախյան երկրորդ պատերազմ

2018-ի թավշյա հեղափոխությունից հետո՝ «Արցախը ծախելու» մեղադրանքներով սկսվեցին, 44-օրյա պատերազմի ընթացքում գագաթնակետին հասան վիրավորանքներն ու ատելությունը նրանց նկատմամբ, ովքեր կհամարձակվեին խոսել փոխզիջման մասին։



Խաղաղության ջատագով համարվող իշխանության աջակից, պատմաբան Լևոն Շիրինյանը, **2020-ի նոյեմբերի 9-ին** այսպիսի գրառում արեց Ֆեյսբուքում. «Վահրամ Պողոսյանի, Դավիթ Բաբայանի մանվածապատ քրթմնջոցները Շուշիում ինչ-որ «վերահսկողության կորուստի մասին» ինձ թույլ են տալիս եզրակացնելու, որ Հայկական Զինուժը, ընդհակառակը, վերահսկում է իրադրությունը

[32] https://hy.wikisource.org/wiki/Պատերազմ,_թե՞_խաղաղություն._լրջանալու_պահը

ստրատեգիական անառիկ ամրոցում, և Շուշին չի՛ ընկնելու, որ Շուշիի անկումը Արցախի կորուստ է նշանակում»։ ՖԲ մի օգտատերոջ մեկնաբանությունը բնութագրում է նաև նախորդող շատ գրառումների ոգին.

Քաղաքագետ Սարո Սարոյանը ևս անողոք էր փոխզիջումների հակված ընդդիմախոսների հանդեպ[33] (14.10.2020). «Միայն տհասները կարող են պնդել, որ մեզ պարտադրելով 5 շրջան վերադարձնել՝ թուրքերը կանգ կառնեն ու պատերազմը կավարտվի», նաև խոստանում էր, որ Ադրբեջանը շուտով կփլուզվի և ՀՀ ղեկավարությունը պիտի կարողանա «բնական կարգավորման և հավասարակշռման բերել Նախիջևանի խնդիրը» (07.10.2020)։

Ցնցումից հետո մեղավորներ փնտրելը, անցյալը դատապարտելը, ինչ-որ մեկի մեղքը (դիցուք՝ դավաճանությունը) հետին թվով նրա և ուրիշների ամբողջ նախորդ կյանքի վրա տարածելը բնորոշ է հետտրավմատիկ իրավիճակին։ Զուգահեռ կարելի է անցկացնել թերևս հետահայաց դետերմինիզմ եզրույթի հետ, որ կիրառվում է իրադարձությունները գնահատելիս։

«Գիտե՞ք, թե որքան գումար է ծախսվել խաղաղապահ նախագծերի վրա։ ՇԱՏ-ՇԱՏ,- վրդովվում էր արցախցի երիտասարդ լրագրողուհին, որի հուզիչ պատերազմական օրագրին[34] շատերս հետևում էինք նախ Ֆեյսբուքում, ապա «Սիվիլնեթում»։- «Քանի՞ մարդ է հարստացել նման նախագծերով։ Քանի՞ դասընթացավար է պատմել քննադատական մտածողության, Hate Speech-ի[35] մասին։ Եթե ոչ ոք չի ուզում խոսել այդ մասին, ապա ես կասեմ. այդ ամենը ԶՈՒՐ էր, բոլորը պարտվեցին։ Քանի որ բոլոր այս մարդիկ, ովքեր գեղեցիկ էին խոսում Թբիլիսիում կամ այլուր, այժմ հաստատ գիտեն իրենց դիրքորոշումը» (*թարգմանել եմ ռուսերենից*)։

Նա իրավացի է, թեկուզև՝ հետին թվով։ Խաղաղության խոսույթը չի կանխել պատերազմը, բայց պատճառն այն չէ, որ սխալ էր, կամ գումարներ շատ են վատնվել (գուցեև վատնվել են), այլ՝ որովհետև հակամարտող երկրների կառավարությունները չեն ցանկացել ցուցաբերել քաղաքական կամք, բազմապատիկ շատ փող է ծախսվել պատերազմի՛ քարոզչության, ատելությա՛ն խոսքի համար։ Խաղաղասիրական նախաձեռնությունները չեն խրախուսել ոչ Ռոբերտ Քոչարյանը, ոչ Սերժ Սարգսյանը, իսկ ալիևյան վարչակարգը գնալով ավելի խիստ է արգելափակել հայ-ադրբեջանական շփումները։ Դրանից կարելի էր հասկանալ, որ խաղաղության խոսույթը մինչև 2020-ի սեպտեմբերը կարող էր միայն ամրապնդել ստատուս քվոն, որ շահեկան էր հայկական կողմի համար, բայց հայկական մեդիան, հետևելով քաղաքական ուժերին, մեծամասամբ մերժել է այն։

Նիկոլ Փաշինյանը 2020-ի հոկտեմբերի 26-ին խոսեց այն մասին, որ «հայ ժողովուրդը, այո, պատրաստ է նույնիսկ ցավոտ փոխզիջումների»[36]։ Միայն Հայ ազգային կոնգրեսի համակիրների, լուսանցային որոշ խմբերի կողմից հնչեցին հատուկենտ ուղղակի կոչեր, որ իշխանությունը չվախենա «ցավոտ փոխզիջումների» շուրջ բարձրացած քննադատության ալիքից։ Եվ Փաշինյանը մեկ օր անց հանդես եկավ ավելի մարտաշունչ ուղերձով, իսկ Արծրուն Հովհաննիսյանը՝ ադրբեջանցիներին «դժոխք» կամ «գյոռբագյոռ» խոստացավ։ Բայց դա, ինչպես գիտենք, իրականություն չդարձավ։

[33] Սարո Սարոյանի գրառումը, https://www.facebook.com/saro.saroyan.9/posts/3562266653809176
[34] Լիկա Զաքարյանի օրագիրը, https://www.armmuseum.ru/news-blog/lika-zakharyan-karabakhskii-dnevnik
[35] ատելության խոսք (անգլերեն)
[36] Հայ ժողովուրդը, այո, պատրաստ է նույնիսկ ցավոտ փոխզիջումների, բայց ոչ կապիտուլյացիայի. Փաշինյան. , https://factor.am/300342.html

Պատերազմի թվային վտանգները

Արթուր Պապյան
կիբերանվտանգության մասնագետ

21-րդ դարի պատերազմների յուրահատկությունը դրանց հիբրիդային բնույթն է, ժամանակակից սոցիալական ցանցերի, հաղորդակցության ու լրատվության բազմազան հարթակների դարում հնարավոր է դարձել թիրախավորել առանձին խմբերի, անգամ՝ յուրաքանչյուր կոնկրետ անձի: Հենց այս պատճառով էլ պատերազմական իրավիճակում ծայրաստիճան կարևոր է դառնում ինչպես յուրաքանչյուր անհատի, այնպես էլ հանրության տեղեկատվական անվտանգությունը՝ պաշտպանվածությունը թիրախավորված քարոզչությունից և ապատեղեկատվությունից, բարոյահոգեբանական կայունության պաշտպանումը, արժեքային կողմնորոշիչների վերահաստատումը և ընդհանուր նպատակի՝ գոյատևման և հաղթանակի համար անհրաժեշտ տեղեկատվական դաշտի ստեղծումը:

Այս նպատակով թե՛ պետությունը, թե՛ մասնավոր բիզնեսը և հանրային կառույցները, թե՛ անհատ քաղաքացիները պետք է ձեռնարկեն անվտանգության միջոցառումներ երկրի թվային ենթակառուցվածքը և տեղեկատվական անվտանգությունը պաշտպանելու համար:

Սա կարող է ներառել այնպիսի միջոցներ, ինչպիսիք են սարքերի, ծրագրերի թարմացումները, ուժեղ գաղտնաբառերի օգտագործումը, երկգործոն կամ երկփուլային անվտանգության կիրառումը, անհայտ աղբյուրներից հղումներ բացելու հարցում զգուշավոր լինելը:

Եթե պետությունը և մասնավոր բիզնեսը ունեն մասնագետներ և ռեսուրս այս միջոցառումները իրականացնելու համար, քաղաքացիների դեպքում յուրաքանչյուր ոք ստիպված է անձամբ ստանձնել ինքնապաշտպանվելու պատասխանատվությունը: Կարևոր է, որ քաղաքացիները կամա թե ակամա զգայուն տեղեկատվություն չբացահայտեն, ապատեղեկատվություն չտարածեն, պաշտպանեն իրենց անձնական տվյալները և օգտահաշիվները:

Այսօր շատերիս տանը կան ցանցային երթուղիչներ (այսպես ասած՝ wifi ցրող սարքեր), խելացի հեռուստացույցներ, AI բարձրախոսներ (Alexa, Google Home), անվտանգության տեսախցիկներ և ինտերնետի հետ կապվող այլ սարքավորումներ: Հաճախ այդ սարքավորումներն ունեն գործարանային գաղտնաբառեր և անվտանգության բազային կարգավորումներ, որոնք անհրաժեշտ է փոխել տանը տեղադրելուց հետո: Ցավոք, քչերն են փոխում գործարանային կարգավորումները, և հարձակվողները այդ մասին գիտեն ու հաճախ կարողանում են հայտնաբերել նման սարքերը և օգտագործել որպես հետագա հարձակումների ցատկահարթակ: Նման հարձակումներից պաշտպանվելու համար քաղաքացիները պետք է փոխեն իրենց սարքերի գործարանային կարգավորումները, գաղտնաբառերը, գործարկեն

անվտանգության և ծրագրային թարմացումները, ակտիվացնեն պաշտպանության համակարգերը՝ հրապատերը (firewall), օգտահաշիվ մուտք գործելու բազմակի նույնականացման համակարգերը[37]։

Հայ-ադրբեջանական հակամարտության հիբրիդային բաղադրիչում հատկապես շատ են ցանցային հարձակումների դեպքերը։ Օրինակ՝ Տավուշում՝ 2020թ. հուլիսյան բախումների օրերին, ադրբեջանցի հաքերները կոտրեցին ՀՀ կառավարության gov.am, e-gov.am և primeminister.am կայքերը և դրանցում տեղադրեցին ադրբեջանական խորհրդանիշներ[38], իսկ հետո կոտրեցին մասնավոր ընկերության՝ Հայաստանի էլեկտրական ցանցերի ena.am կայքը։

Նույն օրերին ադրբեջանցի հաքերները կոտրեցին SMS տեքստային հաղորդագրություններ ուղարկող օպերատորի սերվերը և շուրջ 3000 հայկական բջջային բաժանորդների, իբրև թե Հայաստանի պաշտպանության նախարարությունից, խուճապ առաջացնող SMS հաղորդագրություններ ուղարկեցին։

2020թ. հուլիս-օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ադրբեջանցիները և նրանց աջակցող այլազգի հաքերները կոտրեցին հարյուրից ավել հայկական կայքեր, որոնց մեծ մասը երկար ժամանակ հնարավոր չէր վերականգնել։ Դրանցում կրկին ցուցադրվում էին ադրբեջանական խորհրդանիշներ, այդ երկրի նախագահ Իլհամ Ալիևի լուսանկարը և հակահայկական հաղորդագրություններ։

Անվտանգության միջոցառումների երկրորդ խումբը վերաբերում է սարքավորումների՝ ցանցային երթուղիչների, անվտանգության տեսախցիկների, համակարգիչների, հեռախոսների, IoT (Internet of Things) սարքերի պաշտպանությանը, նաև՝ այն տեղեկության պաշտպանությանը, որը հասանելի է այդ սարքավորումների միջոցով։

Ձեր սարքերը պաշտպանելու համար անպայման փոխեք արտադրողի սահմանած գաղտնաբառը և օգտագործեք ուժեղ գաղտնաբառ։ Խուսափեք այնպիսի գաղտնաբառերից, որոնք կարելի է հեշտությամբ կռահել, օգտագործելով ձեր մասին հասանելի տեղեկատվությունը (ծննդյան օր, ծննդավայր), մի օգտագործեք պարզ թվային հաջորդականություններ կամ բառարանային բառեր։ Ծայրաստիճան կարևոր է նաև թարմացնել սարքի օպերացիոն համակարգը և ծրագրակազմը, քանի որ դրանց մեծ մասը հենց խոցելիությունները շտկելու նպատակով է թողարկվում։

Այսպիսի հարձակումների օրինակները ևս բազմաթիվ են հայ-ադրբեջանական հակամարտությունում։ 2020-ի 44-օրյա պատերազմի ընթացքում, օրինակ, ադրբեջանական հաքերները տեսագրություններ էին հրապարակում Երևանում տեղադրված անվտանգության տեսախցիկներից։ Շատ դեպքերում տեսախցիկները որպես այդպիսին չէին էլ կոտրվում, դրանք պարզապես հասանելի էին համացանցում, իսկ դրանց տերերը չէին փոխել գործարանային գաղտնաբառերը և ադրբեջանցիներին հնարավորություն էին տվել անարգել դիտել, օրինակ, վարսավիրանոցի հաճախորդներին ելումուտը կամ կպնել փողոցային տեսախցիկներին և դիտարկել, թե ինչ է կատարվում Երևանի փողոցներում։ Այդ օրերին նման գործողությունները հիմնականում քարոզչական նշանակություն

[37] http://millab.ge/ar/mil-resources/any/27/any/
[38] Կիբեռհարձակման են ենթարկվել gov.am, e-gov.am և primeminister.am կայքերը, https://hetq.am/hy/article/119356

ունեին, բայց դժվար չէ ենթադրել, որ անվտանգության տեսախցիկները կարող են նաև հակառակորդի հետախուզությանը կամ հրետանուն հնարավորություն տալ մշակել ռազմական, հարձակողական գործողություններ, ճշգրտել հրետանու կրակի ուղղությունը։ Սարքերի անվտանգության նկատմամբ նման անհոգ վերաբերմունքը ուղղակի անթույլատրելի է։

Սարքերի անվտանգությունը պատշպանելու համար արժե կիրառել հակավիրուսային ծրագրեր, ակտիվացնել հրապատը՝ արգելափակելու չարտոնված մուտքը ձեր ցանց և սարքեր։

Անվտանգության միջոցառումների երրորդ խումբը վերաբերում է օգտատերերի վարքագծին։ Քաղաքացիները պետք է հիշեն, որ սոցցանցերում իրենց հրապարակած գրառումները, լուսանկարները, տեսանյութերը կարող են կիրառվել հակառակորդի կողմից՝ հետախուզական տեղեկություններ հայթայթելու և իրենց հարձակման ուղղությունները, թիրախները ճշգրտելու համար։

Զգույշ եղեք անձնական տեղեկություններն առցանց կիսելիս։ 2020-ի պատերազմի ընթացքում, օրինակ, հակառակորդի դրոնի հարձակումից պաշտպանվելու նպատակով Երևանի մերձակայքում հակաօդային պաշտպանության կայան կիրառվեց երեկոյան ժամերին, որից քիչ անց սոցցանցային բազմաթիվ օգտատերեր Երևանի տարբեր վայրերից հրապարակեցին լուսանկարներ, որոնցում երևում էին ՀՕՊ համակարգի կրակոցների հետագծերը։ Դրանով իսկ քաղաքացիները անզգուշաբար հնարավորություն տվեցին հակառակորդին այդ նկարների համադրմամբ մեծ ճշգրտությամբ որոշել ՀՕՊ համակարգի գտնվելու վայրը։

Պատերազմական իրավիճակում քաղաքացիները նաև պետք է գիտակցեն, որ հակառակորդը կարող է խաբեությամբ դրդել վտանգավոր գործողությունների կամ տիրանալ իրենց գաղտնաբառին և մուտք ստանալ օգտահաշիվ։

2020-ին, օրինակ, հեռավար աշխատանքի Upwork հարթակում հայտարարություններ էին տեղադրվել, որոնցով հայաստանյան օգտատերերին առաջարկում էին վճարի դիմաց երկրի տարբեր վայրերից լուսանկարներ և տեսանյութեր հրապարակել։ Թեև հստակ հաստատում չկա, որ այդ հայտարարությունները հարևան երկրի հատուկ ծառայությունների ձեռքի գործն են, տարօրինակ կերպով դրանք դադարեցին պատերազմական գործողությունների ավարտից հետո։ Կարելի է ենթադրել, որ դրանց նպատակը ևս հետախուզական տվյալների հավաքագրումն էր[39]։

2020-ի ռազմական գործողությունների օրերին նաև բազմաթիվ էին դեպքերը, երբ խաբեությամբ կորզում էին մարդկանց սոցցանցային էջեր մուտք գործելու տվյալները, և այդ էջերում հրապարակում ապատեղեկատվություն կամ բարոյալքող տեղեկատվություն՝ զոհերի լուսանկարներ, մանիպուլյատիվ ֆոտոներ։ Հաճախ այդ հարձակումները սկսվում էին ինստագրամյան օգտատիրոջը կամ ֆեյսբուքյան էջի ադմինին ուղղված շահավետ գործարքի առաջարկով. հարձակվողները ներկայանում էին արտասահմանյան գովազդային ընկերության անունից և խոստանում գումար վճարել էջում կամ ալիքում գովազդ տեղադրելու դիմաց, այնուհետև ուղարկում էին «գովազդի» հղումը, որը, իրականում, օգտահաշիվը գողանալու համար ստեղծված էջ էր։

[39] ԱԱԾ-ն տեղեկացնում է՝ սոցիալական հարթակների որոշ հայտարարություններում «նկատելի է ադրբեջանական հետք», https://www.azatutyun.am/a/30910209.html

Վերջին շրջանում տարածում են ստացել նույնատիպ հարձակումները Տելեգրամի ալիքների ադմինների դեմ. նրանց առաջարկում են գովազդել որևէ հավելված, բայց իրականում այդ հավելվածը հեռախոսի մեջ ներբեռնելով, ադմիններն իրենց անձնական տվյալները հասանել էին դարձնում ուղարկողին։

Այս և նմանատիպ օրինակները հուշում են՝ օգտատերերը պետք է միշտ ընտրողաբար և քննադատորեն մոտենան այն հղումներին, որոնք իրենց ուղարկում են օտար անձինք, իսկ հավելվածներ ներբեռնեն միայն վստահելի աղբյուրներից (Apple Store, Play Store, Windows Store)։ Կասկածելի հավելվածները, ֆայլերը, հղումները կարելի է ստուգել՝ այցելելով VirusTotal (https://www.virustotal.com), և բացել միայն այն բանից հետո, երբ հավաստիացել եք, որ դրանք անվնաս են։

Հարձակման մեկ այլ ուղղություն են էլեկտրոնային նամակներն ու կարճ հաղորդագրությունները։ Հատկապես պատերազմական իրավիճակում քաղաքացիները պետք է ծայրաստիճան զգոնություն ցուցաբերեն, չբացեն նամակները, կից փաստաթղթերը, նկարները, ֆայլերը՝ մինչև չհամոզվեն, որ դրանք ուղարկել են իրական և/կամ ծանոթ մարդիկ։ Հնարավորության դեպքում հարկավոր է զանգահարել կամ ֆիզիկապես այցելել և ճշտել, որ տվյալ անձն իսկապես նման նամակ կամ հաղորդագրություն ուղարկել է, ինչպես նաև ստուգել ստացված ֆայլերը, հղումները, ծրագրերը՝ հակավիրուսային ծրագրի կամ վերը հիշատակված VirusTotal հարթակի միջոցով։

Վերջին կետը, որը վերաբերում է թվային անվտանգության բոլոր ոլորտներին՝ անվտանգ գաղտնաբառերի ընտրությունն ու օգտագործումն է։ Պետք է ընտրել 8 և ավելի նիշեր պարունակող այնպիսի գաղտնաբառեր, որոնք հնարավոր չէ կռահել։ Չարժե օգտագործել բաց աղբյուրներում գաղտնաբառի տիրոջ հետ առնչվող անձնական տվյալներ, օրինակ, ծննդավայրն ու ամսաթիվը, մոտ ազգականների կամ սիրելի շունիկի ու փիսիկի անունները։

Գաղտնաբառերը պետք է պարունակեն տառեր, թվեր և հատուկ նիշեր։ Էլ ավելի կարևոր է տարբեր օգտահաշիվների համար տարբեր գաղտնաբառեր օգտագործելը, այլ ոչ թե նույն գաղտնաբառը թե՛ էլեկտրոնային փոստի, թե՛ սոցցանցային օգտահաշվի, թե՛ բանկային հարթակ մուտք գործելու համար։ Այլապես կստացվի, որ որևէ հարթակում գաղտնաբառը կորզելուց հետո հարձակվողները կարող են, դոմինոյի խաղաքարերի պես, իրար հետևից տապալել բոլոր մյուս օգտահաշիվները։

Գաղտնաբառերի պաշտպանությունը համալրելու համար ժամանակակից գրեթե բոոր հարթակներում կիրառվում է նաև երկգործոն կամ երկփուլային անվտանգությունը, երբ գաղտնաբառից բացի հարթակ մուտք գործելու համար հարկավոր է լինում հաստատում՝ SMS հաղորդագրության, հատուկ կոդ գեներատորի կամ հեռախոսի վրա երևացող հաստատման պատուհանիկի միջոցով։ Երկգործոն անվտանգությունը կարող է կանխել օգտահաշվի արտահոսքը, նույնիսկ եթե հարձակվողին հաջողվել է խաբեությամբ գողանալ, կռահել կամ կոտրել գաղտնաբառը։

Գաղափարներ գործնական աշխատանքի համար

ԹԵՄԱ. Պատերազմի պատկերները. ազդեցություն և մանիպուլյացիա

1. Առաջադրանք

2019թ. հոկտեմբերին թուրքական զորքերը քրդերի դեմ ռազմական գործողություններ սկսեցին Սիրիայի հյուսիսում: Սոցիալական ցանցերում, այդ թվում՝ հայկական էջերում, սկսեցին զուգահեռներ տանել 1915թ. Հայոց ցեղասպանության և 2019թ. քրդերի սպանությունների միջև: Շատ էր շրջանառվում այս կոլաժը՝ որպես թուրքերի բարբարոսությունների ապացույց: Իրականում, երկրորդ նկարը կապ չունի 2019թ. դեպքերի հետ, այն պատկերում է 1975թ. մարոկկացիների «Կանաչ երթը»[40]:

Հանձնարարել սովորողներին 2019թ. դեպքերին վերագրվող նկարը ստուգել որոնողական որևէ համակարգի միջոցով (google, bing, yandex) , և փորձել ինքնուրույն պարզել, թե ինչ է այն պատկերում[41]:

[40] Թուրքական ներխուժում Սիրիա. հին նկարները ներկայացվում են որպես նոր, https://fip.am/8700
[41] Ստուգելու համար անհրաժեշտ է նկարը կցել պատկերի որոնման համակարգին, կամ որոնման դաշտում տեղադրել հղումը, ապա ուսումնասիրել ստացված արդյունքները: Լուսանկարը կարելի ներբեռնել այստեղ - https://drive.google.com/file/d/10oUXXRDQByyFtTBIe3aI06mMoJYI8X2P/view?usp=sharing

Հարցեր քննարկման համար

Արդյո՞ք նկարում 2019թ. դեպքերն են։

Որքանո՞վ է վստահելի այն աղբյուրը, որ գտել եք համացանցում։

Արդյո՞ք արդարացված է, թեկուզ բարի նպատակներով, կեղծ լուսանկարների ու փաստերի օգտագործումը։

Ինչպե՞ս դա կարող է ազդել հետևորդների ու լսարանի վստահության վրա։

Ինչպե՞ս դա կարող է ազդել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի վրա։

Պատերազմների ժամանակ օգտագործված կեղծ պատկերների այլ օրինակներ կարելի է գտնել Media.am-ի նյութերում[42]։

2. Առաջադրանք

Լուսանկարները ազդեցիկ են, քանի որ օգնում են տեսնել ու զգալ ցավն ու ուրախությունը։ Լուսանկարի ազդեցությունը քննարկելու համար ընտրել Արցախյան պատերազմի մի քանի տպավորիչ պատկեր և խնդրել մասնակիցներին՝ խմբերով քննարկել, թե ինչ հույզեր են փոխանցում դրանք, փորձել վերնագրել, վերապատմել լուսանկարներում երևացող իրավիճակն ու պատմությունը այնպես, ինչպես իրենք են ընկալել, կամ, օրինակ, թղթի վրա գույներով ներկայացնել իրենց զգացմունքները։

Ապա ընդհանուր խմբով քննարկել փոքր խմբերի եզրակացությունները, փորձել պատասխանել հարցերին՝ ինչու են այդ նկարներն այդքան ազդեցիկ, ինչ լրացուցիչ տեղեկություններ պետք է նշվեն՝ ցանկացած նկար տարածելիս (վայր, ժամանակ, հեղինակ, այլ փաստեր…), որ դեպքերում արժե ասելիքը հենց պատկերով փոխանցել։

Պատկերներ այս առաջադրանքի համար.

Առավոտը Եռաբլուրում[43], Նազիկ Արմենակյան, 2021թ.

Բեռնատարի վրայի տնակի նկարը[44], Անդրեյ Բորոդուլին, AFP, 2020թ.

Քնած զինվորը[45], Վաղինակ Ղազարյան, 2020թ. (Հայաստանը ներկայացնող լուսանկարիչն առաջին անգամ հաղթել է World Press Photo ֆոտոժուռնալիստիկայի միջազգային հեղինակավոր մրցույթում։ Վաղինակ Ղազարյանի «Քնած զինվորը» «Ժամանակակից խնդիրներ մեկ լուսանկարով» անվանակարգում 3 մրցանակակիրներից մեկն է՝ մոտ 5 հազար լուսանկարից)։

---

[42] Լուսանկարչություն և կեղծիք, https://media.am/hy/image/2021/02/27/26475/ , Մինգեչաուր և Գյանջա. կեղծ նկարահանում և վստահության պակաս, https://media.am/hy/verified/2020/10/06/24504/

[43] https://media.am/wp-content/uploads/2021/02/Առավոտը-եռաբլուրում-Նազիկ-Արմենակյան-2021-2048x1365.jpg

[44] https://media.gettyimages.com/photos/truck-carries-a-barn-as-armenian-refugees-leave-the-village-of-nor-picture-id1229670126?s=2048x2048

[45] https://www.worldpressphoto.org/collection/photo-contest/2021/vaghinak-ghazaryan/1

3. Առաջադրանք

2015թ. սիրիացի 3-ամյա տղայի՝ Այլան Քուրդիի լուսանկարը ալեկոծեց համաշխարհային լրատվամիջոցների էջերն ու սոցիալական մեդիան: Երեխան խեղդվել էր Թուրքիայից դեպի հունական Կոս կղզի գաղթի ճանապարհին, ու Թուրքիայի ծովափերից մեկում գտնված մարմինը դարձավ փախստականների ճգնաժամի յուրօրինակ խորհրդանիշը: Շատ լրատվամիջոցներ որոշեցին հրապարակել նկարը, որոշները իրական լուսանկարի փոխարեն տարածեցին գեղարվեստական նկարներ կամ հրաժարվեցին ընդհանրապես այդ պատկերից:



Լուսանկարը՝ @AzzamDaaboul թվիթերյան էջից

Ուսումնասիրել դեպքը[46] և լրագրողական էթիկայի տեսանկյունից քննարկել այն: Արդյո՞ք արդարացված է երեխայի լուսանկարի տարածումը: Բերել կողմ և դեմ փաստարկներ, բանավիճել: Օգտվել Հայաստանի լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրից[47] և այս ձեռնարկի «**Արյուն, ավեր, արցունքներ. մեդիայի խթանիչներն ու ցավազրկողները» նյութից:**

Կարելի է քննարկել նաև «Հետք»-ի որոշումը՝ հրապարակել 2016թ. ապրիլին Արցախի Թալիշ գյուղում ադրբեջանցիների վայրագությունների լուսանկարը[48]:

[46] Պատկեր, որ փախստականների խնդրի ընկալման նոր ալիք բարձրացրեց, media.am https://media.am/hy/newsroom/2015/09/04/5378/
[47] Էթիկայի կանոնագիր, https://ypc.am/wp-content/uploads/2021/05/Code-of-Ethics_arm_May-15_2021.pdf
[48] Վայրագություններ՝ Թալիշում (ԶԳՈՒՇԱՑՈՒՄ. հրապարակված է գնդակահարված անձանց լուսանկար), https://hetq.am/hy/article/66976

ԹԵՄԱ. Լրագրողը՝ առաջնագծում. առաքելությունը, անվտանգությունն ու էթիկան

Ամեն տարի աշխարհում հակամարտությունների պատճառով տասնյակ լրագրողներ են զոհվում. միայն ռուս-ուկրաինական պատերազմի առաջին 8 ամիսներին 15 լրագրող է սպանվել: Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում հակառակորդը թիրախավորել էր հայ և միջազգային լրագրողների մեքենան, երկու ֆրանսիացի լրագրողներ վիրավորվել էին ու վիրահատվել նախ Արցախում, հետո տեղափոխվել և բուժումը շարունակել էին Ֆրանսիայում: 2022թ. սեպտեմբերին արդեն Հայաստանի նկատմամբ ադրբեջանական ագրեսիայի ժամանակ լրագրողները թիրախավորվել էին Գեղարքունիքի մարզի Սոթք բնակավայրում[49]:

4. Առաջադրանք

Խմբերով կամ անհատապես գտնել և ուսումնասիրել աշխարհի տարբեր թեժ կետերում զոհված լրագրողների պատմություններ, օրինակ, Ուկրաինայում զոհված լրագրողների պատմությունները[50]: Քննարկել՝ որքանո՞վ է կարևոր առաջանագծում լրագրողների աշխատանքը, հանուն ինչի՞ են նրանք վտանգում իրենց կյանքը: Պատրաստել կարճ իրազեկող նյութեր թեմայի մասին՝ ներառելով փաստեր, լուսանկարներ, մարդկային պատմություններ: Նյութերը ներկայացնել լսարանում և/կամ տարածել առցանց հարթակներում:

5. Առաջադրանք

2007թ. հունվարի 19-ին Ստամբուլում իր գրասենյակի առջև սպանվեց Թուրքիայի հայկական «Ակօս» շաբաթաթերթի խմբագիր Հրանտ Դինքը: Դինքը հետապնդվում էր ինքնության ու քաղաքացիության թեմաներով համարձակ ելույթների ու հոդվածների համար, նա թուրքերին պատմում էր հայերի, նրանց ներկա խնդիրների, հայկական հարցի պատմության մասին և, ըստ էության, դարձավ այդ երկրում հակահայկական ատելության զոհ: Քննելով «Դինքն ընդդեմ Թուրքիայի» գործը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը փաստել է[51], որ Թուրքիայի իշխանությունը թերացել է և չի կարողացել ապահովել լրագրողի կյանքի իրավունքը՝ շատ լավ տեղյակ լինելով նրա նկատմամբ եղած թշնամանքի մասին:

Ուսումնասիրել Դինքի կյանքը, պաստառ պատրաստել՝ ներկայացնելով նրա գործունեության հիմնական ուղղությունները, սկզբունքները:

Հարցեր քննարկման համար

Որքանո՞վ ենք հանդուրժող լայն հանրության համար ոչ ընդունելի կարծիքներ բարձրաձայնողների նկատմամբ:

[49] Ֆրանսիացի և հայ լրագրողները ադրբեջանական հրետակոծության տակ. լրացվող, https://media.am/hy/newsroom/2020/10/01/24408/

[50] За шесть месяцев войны в Украине убиты восемь журналистов, Репортеры без границ http://bit.ly/3HEXwSm

[51] Հրանտ Դինքը՝ ընդդեմ Թուրքիայի. Թուրքիայի կառավարությունը պետք է վճարի 133 599 եվրո, https://hetq.am/hy/article/47292

Պատրա՞ստ ենք լսել մյուս կողմի կարծիքը (անկախ նրանից, թե կոնֆլիկտը միջանձնային է, ներքաղաքական կամ միջազգային)։

Ինչպե՞ս ենք արձագանքում այն լրագրողների ու հանրային գործիչների հայտարարություններին, որոնք խոսում են հարևանների հետ հարաբերությունների կարգավորման մասին։

Լրացուցիչ նյութեր

- Փ/Ֆ «Հրանտ Դինք.1500.000 + 1», Հանրային հեռուստատեսություն[52]
- Դինքի կենսագրությունը՝ «Հրանտ Դինք» հիմնադրամի կայքում[53]

6. Առաջադրանք

Սովորողներին հանձնարարել ուսումնասիրել «Լրագրողների ավտանգության հիմնախնդիրները» բաժինը ՄՆԿ-ի «Լրագրողների անվտանգությունը» ձեռնարկում[54], ինչպես նաև «Լրագրողի անվտանգությունը հանուն լավ կադրի ու լավ պատմության» հոդվածը[55]։ Խմբերով կազմել վտանգավոր վայրերում աշխատող լրագրողի անվտանգության պարզ ուղեցույց։

Հնարավորության դեպքում հանդիպել ռազմական բախումներ, քաղաքացիական անկարգություններ, աղետներ լուսաբանած լրագրողի հետ՝ քննարկելու, թե արդյոք նա և խմբագրությունը տեղյակ են եղել կանոններին և ինչպես են պատրաստվել վտանգավոր իրավիճակում աշխատելու համար։

7. Առաջադրանք

Դիտել Media.am-ի «Դեպքի վայրում. Անի Մինասյան» ֆիլմը [56] և/կամ կարդալ «Փորձում ենք պատմել մարդկանց մասին, որոնք օգնում են բացատրել, թե ինչ է պատերազմը» հարցազրույցը Ալ Ջազիրայի լրագրող Բերնարդ Սմիթի հետ։

Մասնակիցներին բաժանել խմբերի, որոնցից յուրաքանչյուրը գրի կառնի ու պաստառի տեսքով կներկայացնի.

- անվտանգային ռիսկերը, որոնց բախվում են լրագրողներն իրենց աշխատանքում հակամարտության ժամանակ,

- հակամարտության ժամանակ մեդիայի ու լրագրողի աշխատանքի նպատակները,

- պատերազմի ժամանակ աշխատանքային պայմանների առանձնահատկությունները։

[52] https://www.youtube.com/watch?v=vI6uBs2WowY
[53] https://hrantdink.org/hy/hrant-dink/2959-hrant-dinki-gesagrutyuni
[54] «Լրագրողների անվտանգությունը», ՄՆԿ, https://mediainitiatives.am/wp-content/uploads/2019/02/Security-of-Journalists-Armenian.pdf
[55] Լրագրողի անվտանգությունը հանուն լավ կադրի ու լավ պատմության, https://media.am/hy/newsroom/2022/05/18/32792/
[56] «Դեպքի վայրում. Անի Մինասյան», Media.am https://media.am/hy/on-the-scene/2021/04/16/27304/

Խմբային աշխատանքների ներկայացումից հետո քննարկել թեմաները բոլոր մասնակիցների հետ։

Հարցեր քննարկման համար

Ի՞նչ ռիսկերի են հանդիպում լրագրողները՝ հակամարտության գոտիներում։

Որքանո՞վ էին պատրաստված ֆիլմի/հարցազրույցի հերոսները։ Ի՞նչ փորձ ունեին նախկինում։

Արդյո՞ք ռիսկերը նախապես իմանալն օգնում է պատրաստված լինել ու չվախենալ։

Գիտե՞ք լրագրողների, որ հենց պատերազմի դաշտից էին պատմում Ղարաբաղի, հիմա նաև՝ Ուկրաինայի պատերազմի մասին։

Որքանո՞վ է կարևոր լրագրողների՝ պատերազմական գոտում լինելը, դեպքի վայրից լուսաբանելը։

Ո՞րն է սեփական անվտանգության և կարևոր տեղեկությունը գտնելու, կադրը նկարելու սահմանն ըստ ձեզ։

8. Առաջադրանք

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի՝ «Նոթեր պատերազմից» մուլտիմեդիա նախագծում[57] 7 լրագրողներ պատմում են, թե ինչպես են աշխատել 2020թ. Արցախյան պատերազմի օրերին, ինչ ապրումներ են ունեցել, ինչ հիշողություններ ունեն։
Սովորողներին խմբերով հանձնարարել կարդալ և ուսումնասիրել մեկական նյութ այս նախագծից։ Նյութերը կարդալուց հետո քննարկել նախ լրագրողի ապրումները՝ պատերազմի ժամանակ աշխատելիս։ Ապա մտագրոհի սկզբունքով գրի առնել բառեր (գուցե նաև սիմվոլներ, պատկերներ, ասոցիացիաներ), որոնք նկարագրում են հենց իրենց՝ մասնակիցների զգացմունքներն ու ապրումները պատերազմի, սահմանային բախումների մասին տեղեկություններ կարդալիս և տարածելիս։ Քննարկել արձագանքները։

[57] Նոթեր պատերազմից, ՄՆԿ, https://warnotes.media.am/hy

ԹԵՄԱ. Քարոզչություն և ապատեղեկատվություն, թշնամանք և ատելություն

9. Առաջադրանք

Հակամարտությունների ժամանակ #հեշթեգերը հաճախ դառնում են թվային պատերազմի, քարոզչության ու իրազեկման գործիք։ Իսրայելա-պաղեստինյան հակամարտության դեպքում երկու կողմի պնդումներին հետևելու միջոց դարձան **#IsraelUnderFire** և **#GazaUnderAttack** հեշթեգերը[58], Արցախյան պատերազմի ժամանակ ստեղծվեցին #DontBelieveArmenia և #FactsAboutAzerbaijan հեշթեգերը[59], ռուս-ուկրաինական պատերազմում Թվիթերը ջնջեց Կրեմլին աջակցող #istandwithputin հեշթեգը, իսկ Ուկրաինային սատարող հեշթեգերը լայնորեն տարածվում էին։

Հասկանալու համար, թե ինչպես են աշխատում հեշթեգերը, սովորողների հետ փորձարկեք դրանք ցանցերում. որևէ թեմայով տեղեկատվական արշավ նախաձեռնեք և տարածեք՝ օգտագործելով կարճ, գրավիչ հեշթեգեր։

Լրացուցիչ նյութեր

Տեղեկատվական պատերազմ. կեղծ հաշիվներ, Media.am[60]

Թվային զորքեր. ինչպե՞ս էին օգտատերերը մասնակցում տեղեկատվական պատերազմին, media.am[61]

Ինչպես է հեշթեգը կեղծ լուրեր տարածելու գործիք դառնում. #SaveKessab-ի դեպքը, Media.am[62]

10. Առաջադրանք

2022թ. սեպտեմբերի 12-13-ին Ադրբեջանը հարձակվեց Հայաստանի վրա՝ մոտենալով Ջերմուկ քաղաքին, օկուպացնելով նոր տարածքներ։ Միջազգային արձագանքն այս անգամ մեծ էր, շատ պետություններ դատապարտեցին Ադրբեջանի ագրեսիան։ Սակայն միջազգային մեդիայում եղան նաև շփոթ ու թյուրընկալումներ։ The New York Times-ն, օրինակ, հոդվածը վերնագրեց այսպես՝ «Բախումներ են սկսվել Լեռնային Ղարաբաղում՝ հերթական պատերազմի մտավախություն առաջացնելով» (Clushes Erupt in Nagorno-Karabakh Raising Fears of Another War)։ Փաստերի ստուգման հարթակը հավաքեց սխալ վերնագրերը և բացատրեց թյուրիմացությունը[63]։ The New York Times-ը հետագայում փոխեց վերնագիրը՝ սակայն առանց բացատրության։

[58] «Պատերազմ ուղիղ եթերում» Ս. Մարտիրոսյան, https://mediamax.am/am/column/12344/
[59] «Թվիթերյան պատերազմ. #DontBelieveArmenia vs #FactsAboutAzerbaijan», https://media.am/hy/verified/2020/10/08/24545/
[60] Տեղեկատվական պատերազմ. կեղծ հաշիվներ, https://media.am/hy/verified/2020/10/11/24601/
[61] Թվային զորքեր. ինչպե՞ս էին օգտատերերը մասնակցում տեղեկատվական պատերազմին, https://media.am/hy/verified/2021/01/26/26011/
[62] Ինչպես է հեշթեգը կեղծ լուրեր տարածելու գործիք դառնում. #SaveKessab-ի դեպքը, https://media.am/hy/verified/2014/03/31/4272/
[63] «Արտերկրի մեդիան շփոթում է հայ-ադրբեջանական բախումների վայրը», Փաստերի ստուգման հարթակ, https://fip.am/20382



The New York Times-ի՝ սեպտեմբերի 13-ի հոդվածի նախնական և փոխված վերնագրերը

Քննարկել այս օրինակը սովորողների հետ, լսել նրանց կարծիքը՝ ի՞նչ արժեքներ, շահեր, հանգամանքներ են ազդում միջազգային մեդիայում հայտնվող թեմաների, վերնագրերի ընտրության վրա։

Օգտակար կլինի ուսումնասիրել Գեղամ Վարդանյանի՝ «#ElectricYerevan-ի լուսաբանումը արտասահմանյան լրատվամիջոցներում» ձեռնարկը[64], որտեղ նա վերլուծում է 2015թ. ամռանը Երևանում էլեկտրաէներգիայի թանկացման դեմ #ElectricYerevan անունն ստացած բողոքի ցույցերի լուսաբանումը ռուսական և արևմտյան մեդիայում։

11. Առաջադրանք

Սովորողներին բաժանել խմբերի և խմբերով վերլուծել 2020թ. Արցախյան պատերազմի՝ նոյեմբերի 9-ի հրադադարի մասին՝ ստորև բերված վերնագրերն ու հոդվածները տարբեր արտասահմանյան լրատվամիջոցներում՝ ուսումնասիրելով նաև լրատվամիջոցների մասին տեղեկությունները։

Конец войны в Карабахе: соглашение потребовало мужества глав стран, Вести,[65]

Армения проиграла? Как разделят Карабах? Зачем там наши миротворцы? Почему простили сбитый вертолет? Отвечает военный эксперт Павел Фельгенгауэр, Новая Газета[66],

Cease-fire in Nagorno-Karabakh provokes protests in Armenia, celebrations in Azerbaijan, Washington Post[67],

Russia’s win in Nagorno-Karabakh is EU’s loss, Politico[68],

Nagorno-Karabakh: ‘Everyone benefits from Russia-brokered ceasefire deal except Armenia’, France 24[69],

Iran the big loser in Nagorno-Karabakh war, Arab News[70]

[64] «#ElectricYerevan-ի լուսաբանումը արտասահմանյան լրատվամիջոցներում» , ՄՆԿ https://media.am/hy/lab/2020/03/13/17887/
[65] https://www.vesti.ru/article/2483575
[66] https://novayagazeta.ru/articles/2020/11/10/87900-artsahskaya-mitrovitsa-v-stepanakerte
[67] https://www.washingtonpost.com/world/europe/nagorno-karabakh-ceasefire-armenia-russia-azerbaijan/2020/11/10/b1b9bcc0-231b-11eb-9c4a-0dc6242c4814_story.html
[68] https://www.politico.eu/article/russia-win-eu-loss-in-nagorno-karabakh/
[69] https://www.france24.com/en/europe/20201112-nagorno-karabakh-everyone-benefits-except-armenia-from-russia-brokered-ceasefire-deal
[70] https://www.arabnews.com/node/1762626

Հարցեր ուսումնասիրության համար

Ի՞նչ լրատվամիջոցներ են սրանք (որտե՞ղ են, ի՞նչ ֆինանսական աղբյուրներ ունեն, մասնավո՞ր են, թե՞ պետական, ունե՞ն էթիկայի կանոններ...)։

Արդյո՞ք վերնագրերը ներկայացնում են իրականությունը։

Արդյո՞ք դրանք պարունակում են վերաբերմունք, դիրքորոշում, շահեր։

Ինչպիսի՞ ազդեցություն կունենա այդ հոդվածը տվյալ երկրի լսարանի և Հայաստանի լսարանի համար։

Դուք ինչպե՞ս կփոխեիք վերնագիրը և կխմբագրեիք հոդվածը, ինչո՞ւ։

Լրացուցիչ նյութեր

Լինել հայ և գրել պատերազմի մասին օտար լսարանի համար, Media.am[71]

Ղարաբաղյան 44-օրյա պատերազմը ռուսական և թուրքական մամուլում, Media.am[72]

Conflict coverage 101:striking balance, OC media[73]

12. Առաջադրանք

Սովորողների հետ քննարկել, թե ինչպես են միջազգային լրագրողների պատկերացումներն ու արժեքները ազդում հակամարտության լուսաբանման վրա։ Սովորողներին բաժանել խմբերի և նրանց տրամադրել հետևյալ նյութերը՝ Ուկրաինայի վրա ռուսական ներխուժման լուսաբանումից։

1. Ամերիկյան NBC հեռուստաընկերության լրագրողի խոսքը ուկրաինացի փախստականների մասին.[74]

«Կոպիտ ասած՝ նրանք սիրիացի փախստականներ չեն, նրանք հարևան Ուկրաինայի փախստականներ են։ Նրանք քրիստոնյա են, սպիտակամաշկ, նրանք շատ նման են Լեհաստանում ապրող մարդկանց»։

2. Բրիտանական The Telegraph-ի փորձագետ Դանիել Հաննանի ձևակերպումը ուկրաինացի փախստականների մասին.

«Նրանք այնքան նման են մեզ թվում, ինչն էլ ամենն ավելի շոկային է դարձնում։ Ուկրաինան եվրոպական երկիր է, որտեղ մարդիկ Նեթֆլիքս են նայում և ունեն Ինստագրամի հաշիվներ, քվեարկում են ազատ ընտրություններում ու կարդում առանց գրաքննության թերթեր։ Պատերազմն այլևս մի բան չէ, որը թակում է միայն աղքատացած ու հեռավոր ժողովուրդների դռները։ Այն կարող է պատահել բոլորի հետ»։

Հանձնարարեք խմբերին ուսումնասիրել և քննարկել լրագրողների այս խոսքերը, ապա ներկայացնել, թե էթիկական ինչ խնդիրներ են տեսնում դրանցում։ Խմբերի առաջին արձագանքը լսելուց հետո նրանց ներկայացրեք Arab And Middle Eastern

[71] https://media.am/hy/crossroad/2020/12/09/25397/
[72] https://media.am/hy/verified/2021/03/15/26718/
[73] https://mailchi.mp/b4120f3b9aeb/conflict-coverage-101-striking-balance?e=e9703d0aa2
[74] https://twitter.com/AFC_489/status/1497504094071648258?s=20&t=7iJYupiD2WMeoOvDQF21cg

Journalists Association-ի (Արաբական և Միջին Արևելքի լրագրողի ասոցիացիա) հայտարարությունը՝ լրագրողների արտահայտությունների վերաբերյալ[75].

«Ասոցիացիան դատապարտում և կտրականապես մերժում է օրիենտալիստ և ռասիստ մոտեցումը, որ որևէ ազգ կամ երկիր «ոչ քաղաքակիրթ է» կամ ունի տնտեսական պատճառներ, որոնցով նա արժանի է կոնֆլիկտի: Այս մեկնաբանությունները արևմտյան լրագրողների մտածողության արդյունքն են, որոնք նորմալացնում են ողբերգությունը աշխարհի այնպիսի հատվածներում, ինչպիսիք են Միջին Արևելքը, Աֆրիկան, Հարավային Ասիան, Լատինական Ամերիկան.... նաև նպաստում է աշխարհում այն ազգերի վերացմանը, որոնք շարունակում են ենթարկվել բռնազավթումների և ագրեսիայի»:

Արդյո՞ք սովորողները համաձայն են այս քննադատության հետ, ինչո՞ւ: Արևմտյան լրատվամիջոցները նույնպես քննարկեցին այս միջադեպերը լրագրողական էթիկայի տեսանկյունից[76], սա նույնպես կարելի է օգտագործել քննարկման համար:

13. Առաջադրանք

Սովորողների հետ ուսումնասիրել և քննարկել, թե աշխարհում ինչ հակամարտություններ և պատերազմներ են ընթանում, և որքանով են դրանք գրավում մեդիայի ուշադրությունը:

Ուսումնասիրության համար պետք է առանձնացնել մի քանի ընթացիկ զինված հակամարտություն և մի քանի լրատվամիջոց: Խմբերից յուրաքանչյուրը պետք է ուսումնասիրի մեկ հակամարտության լուսաբանումը ընտրված բոլոր լրատվամիջոցներում: Լրատվամիջոցներն ընտրել այնպես, որ դրանք ներկայացնեն տարբեր երկրներ ու լսարաններ. եվրոպական (բրիտանական BBC, Guardian, ֆրանսիական Le Figaro, գերմանական Bild…), արաբական (al Jazeera), ռուսական (պետական՝ Первый канал, անկախ՝ Новая Газета), հայկական (Հայկական ժամանակ, news.am, Epress, 168.am, Civilnet)…

Ուսումնասիրության արդյունքում խմբերը պատրաստում են կարճ զեկույցներ ու ներկայացնում միմյանց: Քննարկել ու համեմատել արդյունքները՝ պարզելու, թե որ հակամարտությունն էր ավելի մեծ ուշադրության արժանացել և որ մեդիաներում: Քննարկել, թե ինչու:

Ապա խմբերով լրագրողական նյութեր պատրաստել ուսումնասիրված հակամարտությունների մասին տեղական լսարանի համար: Հայաստանում ապրող մարդկանց ներկայացնել տվյալ հակամարտությունը այնպես, որ լինի հասկանալի, փաստարկված, ստուգված, պահպանվեն էթիկայի և լուսանկարների/տեսանյութերի հեղինակային իրավունքի կանոնները, նշվեն սկզբնաղբյուրները:

14. Առաջադրանք

2014թ. ռուս-ուկրաինական հակամարտության ժամանակ Ռուսաստանի առաջին ալիքը տարածեց մի տեսանյութ[77], որտեղ Սմոլենսկից փախստական մի կին

[75] https://www.facebook.com/AMEJAGlobal/photos/full-text-of-ameja-statement-on-ukraine-media-coverage-belowthe-arab-and-middle-/4979359102121856/

[76] Քննադատություններ արևմտյան մեդիայի հասցեին, https://media.am/hy/newsroom/2022/03/03/31911/

77 Ռուսական Առաջին ալիքի տեսանյութը, http://bit.ly/3lxipI0

պատմում է, թե ինչպես են ուկրաինացի զինվորները քաղաքի հրապարակում բոլորի աչքի առաջ խաչել փոքր երեխայի։

Դիտել տեսանյութը մասնակիցների հետ, քննարկել և ստուգել։

Հարցեր քննարկման համար

Որքանո՞վ է վստահելի հարցազրույց տվող կինը։

Արդյո՞ք տեսանյութում կան բավարար ապացույցներ։

Արդյո՞ք լրագրողը փորձել է որևէ կերպ ստուգել տեղեկությունները։

Ինչպիսի՞ն է լրագրողի վարքն ու խոսքը հարցազրույցի ժամանակ։

Եթե դուք լինեիք լրագրող, ի՞նչ կանեիք, եթե զրուցակիցը նման պատմություն պատմեր։

Ինչպե՞ս կարելի է ստուգել այս պատմությունը։

Հաշվի առնելով, որ տեսանյութը տարածել է ռուսական պետական լրատվամիջոցը, որո՞նք կարող են լինել դրա շարժառիթներն ու նպատակները։

Ուկրաինացիների ի՞նչ կերպար է փորձում ստեղծել նյութը։

Քննարկումից և ստուգելու փորձերից հետո՝ մասնակիցներին պատմել, որ տեսանյութն ամբողջովին հորինվածք է, և լրագրողները որևէ ապացույց չեն գտել նման իրադարձության վերաբերյալ[78]։ Ավելին, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թշնամու կերպարը անմարդկայնացնելու համար նման նարատիվ օգտագործել են բրիտանացիները՝ տարածելով իբրև թե խաչված կանադացի զինվորի մասին հորինված պատմություն։

Նկարը՝ ԱՄՆ կոնգրեսի գրադարանից[79]

[78] Фейк: украинские военные распяли трехлетнего ребенка, https://www.delfi.lt/ru/detektor-lzhi/lozh/fejk-ukrainskie-voennye-raspyali-trehletnego-rebenka.d?id=89665481
[79] Լուսանարը՝ ԱՄՆ կոնգրեսի գրադարանից https://loc.gov/pictures/resource/cph.3g10652/

15. Առաջադրանք

Հասկանալու համար, թե ինչու և ինչպես են տարբեր լրատվամիջոցներ, մարդիկ, կողմեր տարբեր կերպ ներկայացնում հակամարտությունը, վերհիշենք Թումանյանի «Մի կաթիլ մեղրը» հեքիաթը[80]։ Բաժանե՛ք սովորողներին խմբերի, որոնք պիտի վերապատմեն հեքիաթը տարբեր կերպարների դիտանկյունից։

Խումբ 1 – Խանութպանի համագյուղացիներ

Խումբ 2 - Չոբանի համագյուղացիներ

Խումբ 3 - Կենդանիների իրավունքների պաշտպաններ

Խումբ 4 - Լրագրող

Խումբ 5 – Ոստիկանություն

Խմբերը կարող են բեմականացնել կամ գրի առնել պատմությունն իրենց հերոսի «աչքերով», նրան բնորոշ լեզվով ներկայացնելով, թե ինչու է ծագել վեճը, ով էր մեղավոր, ինչ կարելի էր անել ու ինչ պետք է անել հիմա, արդյոք հնարավոր է հաշտության եզրեր գտնել…

Լրացուցիչ նյութ

«Մեդիագրագիտություն» ձեռնարկ[81], Թեմա 1, Վարժություն, էջ 12

[80] «Մի կաթիլ մեղրը», Հ. Թումանյան https://impoqrik.am/jamanc/banastexcutyunner/223-honey.html
[81] «Մեդիագրագիտություն» ձեռնարկ, Ինտերնյուս, https://media.am/hy/lab/2020/04/16/17917/

ԹԵՄԱ. Ֆիլմերը և հակամարտությունները

16. Առաջադրանք

Միասին դիտել «Բարև, Բելգիա» ֆիլմը, որ պատմում է Բելգիայում ֆրանսախոս և ֆլամանդախոս հատվածների միջև կոնֆլիկտի մասին: Առանձնահատուկ ուշադրություն դարձնել ֆիլմի երեք դրվագներին, որտեղ հիշատակվում է մեդիան:

Դրվագ 1 – Մեդիան՝ կոնֆլիկտի կողմ

Ֆիլմի մոտավորապես 4:30 րոպեին խոսվում է այն մասին, որ երկրում կան ֆրանսերեն և ֆլամանդերեն լրատվամիջոցներ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է իր համայնքի ձայնը, ասելիքը, բայց հաճախ միակողմանի է խոսում իրողությունների մասին, չի ներառում մյուս կողմի կարծիքը:

Միասին դիտելով դրվագը և օգտվելով այս ձեռնարկի նյութերից՝ քննարկել, թե ընդհանրապես հակամարտությունների ժամանակ ինչպես է մեդիան օգտագործվում քարոզչության ու հակաքարոզչության համար: Զուգահեռներ տանել ֆիլմում նկարագրվող իրադարձությունների ու մեր իրականության միջև:

Դրվագ 2 – Ապատեղեկատվությունը՝ հանրությանը «արթնացնելու գործիք»

Ֆիլմի 11-րդ րոպեից ներկայացվում է «Բայ, բայ, Բելգիա» բելգիական ֆիլմի ցուցադրության պատմությունը, որը 2006-ին հեռարձակվել է Բելգիայի ֆրանսալեզու հեռուստատեսությամբ՝ հայտարարելով, թե երկրի ֆլամանդական հատվածը անկախություն է հռչակել: Այս հայտարարությունը և անկախության հռչակման կադրերը, հարցազրույցներն իրական փորձագետների և քաղաքական գործիչների հետ բեմադրված էին: Ըստ էության, տարածվել էր կեղծ լուր՝ ցույց տալու համար, որ նման սցենար հնարավոր է, ու պետք է քննարկում սկսել կոնֆլիկտի մասին: Ֆիլմի հեռարձակման ընթացքում տեքստային զգուշացում է հայտնվել այն մասին, որ սա հորինված պատմություն է, սակայն շատերը զգուշացումը չեն նկատել ու հավատացել են լուրին. երկրում աղմուկ էր բարձրացել:

Սովորողների հետ հավելյալ ուսումնասիրել այս պատմությունը[82]. օրինակ՝ BBC-ն առաջիններից էր, որ գրեց այս պատմության մասին:

Քննարկել, թե արդյո՞ք արդարացված էր այս մեթոդի կիրառությունը հանրության ուշադրությունը թեմայի վրա բևեռելու համար: Որտե՞ղ է ապատեղեկատվության և բեմադրության սահմանը, և ո՞րն է լրատվամիջոցի պատասխանատվությունը:

Դրվագ 3 – Մեդիան՝ միավորման և համախմբման միջոց

Ֆիլմի 23:30 րոպեից խոսվում է Տինտին-ի մասին. սա բելգիացի լրագրողի կոմիքսային կերպար է, որը հայտնի է ամբողջ Եվրոպայում: Ըստ ֆիլմի՝ Տինտինի կերպարը համախմբում է ֆլամանդացիներին և ֆրանկոֆոններին, օգնում է, որ իրենց բելգիացի զգան՝ անկախ լեզվից:

Սա առիթ է խոսելու մեդիայի միավորող ուժի մասին: Պետք է հիշել և քննարկել մեդիայից օրինակներ (ֆիլմեր, երգեր, մուլտֆիլմեր), որոնք դարձել են հայ ինքնության խորհրդանիշ, կամ հայ-ռուսական, հայ-վրացական ու այլ ազգերի հետ

[82] Viewers fooled by ‘Belgium split’, http://news.bbc.co.uk/2/hi/europe/6178671.stm

բարեկամության սիմվոլ։ Օրինակներ, որ համախմբում են աշխարհի մարդկանց սպորտի, երաժշտության, սիրո, ընտանիքի գաղափարի, մարդու իրավունքների և այլ արժեքների ու սիմվոլների շուրջ։

Դրան հակառակ, հայ-ադրբեջանական հակամարտության կոնտեքստում քննարկեք ֆիլմերում թշնամանքի, ծաղրի, ատելության տարածումը։ Առաջարկում ենք օգտվել Caucasus Talks նախագծի ուսումնասիրություններից[83] :

17. Առաջադրանք

Ընտրել և դիտել Ինտերնյուս Հայաստանի և Ինտերնյուս Ադրբեջանի՝ համատեղ արված «Կինոերկխոսություններ» նախագծի ֆիլմերից մեկը և քննարկել[84]։ Այս ֆիլմերը պատրաստվել են 2000-ականների սկզբին և նպատակ ունեին մարդկային պատմությունների միջոցով ցույց տալ հայկական և ադրբեջանական կողմերում ապրող իրական մարդկանց կյանքը, պատերազմի հետևանքը նրանց վրա, նրանց ճակատագրերն ու մտածումները։

«Կինոերկխոսություններ» ձեռնարկը պատմում է նախագծի ու ֆիլմերի մասին և հուշում, թե ինչպես կարելի է դիտել ու քննարկել ֆիլմերը[85]։

[83] Հայկական և ադրբեջանական ֆիլմեր. Թշնամու կերպարը/ Հերոսի կերպարը/ Մենք և նրանք https://www.youtube.com/@caucasustalks3174/videos

[84] «Կինոերկխոսություններ» նախագծի ֆիլմերը հայերեն՝ ռուսերեն և անգլերեն լուսագրերով https://vimeo.com/channels/dialoguethroughfilm/page:1

[85] «Կինոերկխոսություններ» ձեռնարկ, Ինտերնյուս https://rc-services-assets.s3.eu-west-1.amazonaws.com/s3fs-public/DialogueThroughFilm_web_AR.pdf

ԹԵՄԱ. Թվային անվտանգություն

18. Առաջադրանք

Ինֆորմացիոն պատերազմների ժամանակ հակառակորդը փորձում է մյուս կողմի հասարակության վստահությունը շահել՝ համացանցում բացելով նոր էջեր, որոնք նմանակում են տեղական լրատվամիջոցների, վստահելի փորձագետների էջերին։ Media.am-ի հոդվածից[86] ընտրել 2020թ. Ղարաբաղյան պատերազմի ժամանակ ադրբեջանական կեղծ էջերի օրինակներ, քննարկել դրանք, համեմատել իրական էջերի հետ, ուշադրություն դարձնելով.

- էջի հավաստիության կապույտ նշանի առկայությանը,
- էջերի բացման ամսաթվին,
- հետևորդների/ընկերների քանակին,
- անձնական լուսանկարներին,
- արված գրառումների ամսաթվին, ուղղագրությանը, ուղերձներին։

Կարելի է նաև գտնել ու կիրառել այլ օրինակներ։

19. Առաջադրանք

Խաղալ ՄՆԿ-ի «Ցանցառ» խաղը[87]՝ թարմացնելով թվային անվտանգության մասին գիտելիքը։ Այնուհետև ստուգել սեփական սոցցանցային օգտահաշիվների անվտանգության կարգավորումները, ակտիվացնել երկփուլային անվտանգությունը, վերանայել ընկերների ցուցակները, հին հաղորդագրությունները։

[86] «Տեղեկատվական պատերազմ. կեղծ հաշիվներ», https://media.am/hy/verified/2020/10/11/24601/
[87] «Ցանցառ» համակարգչային խաղ, ՄՆԿ, https://tsantsar.media.am/

Օգտակար հղումներ

«Մեդիագրագետ քաղաքացու ուղեցույց», ՄՆԿ, ԱԳՆ, 2022, https://media.am/hy/lab/2022/05/02/32646/

«Մեդիա ուգիտություն». մեդիագրագիտության առցանց դասընթաց, ՄՆԿ, 2022, https://elearning.media.am/course-category/մեդիա-ուգիտություն/

«Մեդիա ուգիտություն». մեդիագրագիտության ուսումնական ձեռնարկ, ՄՆԿ, 2022, https://media.am/hy/lab/2022/08/29/33843/

Մեդիագրագիտության, փաստերի ստուգման և թվային անվտանգության թեմաներով համակարգչային խաղեր, https://media.am/hy/medialiteracy/2020/05/02/21336/

«Էնցիկլոմեդիա» մեդիագրագիտության փոդքասթ։ Էպիզոդներ քարոզչության, ապատեղեկատվության ու պատերազմի լրահոսի մասին.

https://media.am/hy/encyclomedia/2022/10/04/34289/

https://media.am/hy/encyclomedia/2022/10/07/34323/

https://media.am/hy/encyclomedia/2020/03/03/19962/

https://media.am/hy/encyclomedia/2020/11/21/25126/

https://media.am/hy/encyclomedia/2020/12/07/25362/

https://media.am/hy/encyclomedia/2020/12/13/25444/

«Նոթեր պատերազմից» մուլտիմեդիա նախագիծ, ՄՆԿ, 2022 https://warnotes.media.am/en

«Շրջանի մասեր», 3 մասից բաղկացած վավերագրական ֆիլմ Ղարաբաղյան հակամարտության մասին, Conciliation Resources, 2019, https://vimeo.com/channels/1830303

«Կինոերկխոսություններ». Նախագծի ֆիլմերը պատրաստել են ադրբեջանցի և հայ երիտասարդները, Ինտերնյուս, 2006-2014, https://vimeo.com/channels/dialoguethroughfilm/page:3

«Հակամարտությունների աշխարհ», հայերեն վավերագրական ֆիլմերի շարք տարբեր հակամարտությունների մասին, Ինտերնյուս, 2012, https://vimeo.com/channels/worldofconflicts

«Մենք ենք». պատանեկան հեռուստահաղորդում, որ պատրաստում էին հայ, ադրբեջանցի և վրացի դպրոցականները 2004-2013թթ. ընթացքում, https://vimeo.com/channels/menkenk

«Հիշողություններ առանց սահմանների». ֆիլմը ներկայացնում է երեք պատմություն Թուրքիայից, Ադրբեջանից և Արցախից, ՄՆԿ https://vimeo.com/52695463

«Իմ հայացքը». ֆիլմերը պատրաստել են հայ և թուրք ուսանողները, ՄՆԿ, https://vimeo.com/channels/myviewdocumentaries

«Պահապանները». Ֆիլմ հայկական խաչքարերի մասին, ԱԼՏԵՌԱ, 2013 https://www.youtube.com/watch?v=VQ8iMW80I40

«#Արցախյան պատերազմ-2020. Վկայություններ», Հետք, https://hetq.am/hy/tag/Արցախյան%20պատերազմ-2020.%20վկայություններ

«Լրագրողների անվտանգության ձեռնարկ», ՄՆԿ, 2018, https://media.am/hy/lab/2018/04/19/9653/

«Անվտանգության կանոններ՝ զինված բախումների գոտում աշխատող լրագրողների համար», Media.am, 2016, https://media.am/hy/newsroom/2016/04/11/6260/

«Դեպքի վայրում. Էդիկ Բաղդասարյան», Media.am, 2016, https://media.am/hy/newsroom/2016/04/13/6270/

«Դեպքի վայրում. Թաթուլ Հակոբյան», Media.am, 2016, https://media.am/hy/newsroom/2016/04/17/6288/

«Դեպքի վայրում. Անի Մինասյան», Media.am, 2022, https://media.am/hy/on-the-scene/2021/04/16/27304/

«Երևակում», վավերագրական ֆիլմ, Mansuryan production, 2022, https://www.youtube.com/watch?v=TQufznlrmKk

«Ուկրաինա. բոլորի պատերազմը՝ կանայք և երեխաներ», Վ. Մարտիրոսյան, 2022, https://www.youtube.com/watch?v=9z6YupVFkx0

«Արցախում ժամանակի ռիթմը կորցրած լրագրողների պատմությունները», Media.am, 2020, https://media.am/hy/newsroom/2020/12/03/25312/

«Լուսանկարչության էթիկան մեդիայում», Media.am, 2018, https://media.am/hy/mediablobe/2018/04/05/9541/

«Մարդկային պատմություններն են մեդիայի ողնաշարը», հարցազրույց Ուկրաինայի The Kyiv Independent անգլալեզու կայքի գլխավոր խմբագիր Օլգա Ռուդենկոյի հետ, Media.am, 2022, https://media.am/hy/in-the-library/2022/08/02/33685/

«Գուցե մարդիկ այդքան հեշտ չգնան պատերազմի, եթե նկատեն, որ դիմացինն էլ մարդկային դեմք ունի, չէ՞». հարցազրույց ԱՄՆ Հանրային ռադիոյի ավագ պրոդյուսեր, լրագրող, Պուլիցերյան մրցանակակիր Գրեհեմ Սմիթի հետ, Media.am, 2022, https://media.am/hy/viewpoint/2022/02/15/31689/

«Փորձում ենք պատմել մարդկանց մասին, որոնք օգնում են բացատրել, թե ինչ է պատերազմը». հարցազրույց Ալ-Ջազիա լրատվական գործակալության լրագրող Բերնարդ Սմիթի հետ, որը Արցախում լուսաբանում էր 44-օրյա պատերազմը, Media.am, 2020, https://media.am/hy/viewpoint/2020/10/16/24684/

«Պատերազմը, փաստերի ստուգումը և քարոզչությունը. Հովհաննես Նազարեթյան», «Գրադանում», Media.am, 2021, https://www.youtube.com/watch?v=PGg-hwTaDKA

«Ուղեցույց պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ լրագրողների ու լրատվամիջոցների վարքի», ՁԼՄ Էթիկայի դիտորդ մարմին, https://ypc.am/wp-content/uploads/2021/09/Guidelines_Conflicts_Ed.-Supplemented_arm.pdf

Հայաստանի և Ադրբեջանի ԶԼՄ-ներում ատելության խոսքի բառարան, Երևանի մամուլի ակումբ, 2014, https://ypc.am/hy/հայաստանի-և-ադրբեջանի-զլմ-ներում-ատե/?lang=hy

«Ապատեղեկատվությունն ու կեղծ տեղեկատվությունը Հայաստանում», զեկույց, Freedom House, 2021, https://freedomhouse.org/sites/default/files/2021-07/Disinformation-in-Armenia_Am-final.pdf

“Врагу - ненависть, ненависть, ненависть”. Чем “культ победы” оборачивается для азербайджанских школьников, BBC, 2022, https://www.bbc.com/russian/features-64077433

“Пропаганда – топливо для войны”, вДудь, 2022, https://www.youtube.com/watch?v=N8ubzqjRQgE

“Муратов: Что происходит с Россией?”, вДудь, 2022, https://www.youtube.com/watch?v=z1C01Gc9w-w&t=8203s

«Հայկական և ադրբեջանական ֆիլմեր. Հերոսի կերպարը», Caucasus Talks, 2022, https://www.youtube.com/watch?v=2T_uN-j-LCM

«Հայկական և ադրբեջանական ֆիլմեր. ԹշնամուՀերոսի կերպարը», Caucasus Talks, 2022, https://www.youtube.com/watch?v=09_c38Jmfek

Media and War: Resource Unit, Morningside Center for teaching social responsibility , https://www.morningsidecenter.org/teachable-moment/lessons/war-and-media-resource-unit

How to Talk to Kids About Violence, Crime, and War, Commonsense Media, 2011 https://www.commonsensemedia.org/articles/how-to-talk-to-kids-about-violence-crime-and-war

Lesson of the Day: ‘Photographing the Reality of War’, The New York times lesson plan, 2022, https://www.nytimes.com/2022/04/13/learning/lesson-plans/lesson-of-the-day-photographing-the-reality-of-war.html

How Educators Around the World Are Teaching the Russia-Ukraine War, The New York times lesson plan, 2022, https://www.nytimes.com/2022/05/20/learning/lesson-plans/how-educators-around-the-world-are-teaching-the-russia-ukraine-war.html

Փաստերի ստուգմամբ զբաղվող հայաստանյան հարթակներ.

Fip.am,

Media.am/verified

Civilnet.am/բաժիններ/civilnetcheck/